



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԵԾ ՊԱԼԱՏ

**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ**

ըստ էության խոշտանգման բնույթի արարք համարվող հանցանքի քրեական  
հետապնդման, դատապարտման եւ պատժի նկատմամբ վաղեմության ժամկետի  
կիրառելիության վերաբերյալ

**Դիմող՝**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան

(Դիմում թիվ P16-2021-001)

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

26 ապրիլի 2022թ.

*Սույն կարծիքը վերջնական է: Այն կարող է ենթարկվել խմբագրական  
փոփոխությունների:*



Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հանդես գալով Մեծ պալատի հետեւյալ կազմով՝

Ռոբերտո Սպանո [Robert Spano]՝ *Նախագահ,*

Ջոն Ֆրիդրիկ Կյոլբրո [Jon Fridrik Kjølbro],

Սիոֆրա Օ'Լիրի [Síofra O'Leary],

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev],

Ջորջ Ռավարանի [Georges Ravarani],

Մարկո Բոշնյակ [Marko Bošnjak],

Էգիդիյուս Կյուրիս [Egidijus Kūris],

Բրանկո Լուբարդա [Branko Lubarda],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Ալենա Պոլաչկովա [Alena Poláčková],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking],

Մարիա Էլոսեգի [Maria Elósegui],

Լորեն Շեմբրի Օրլանդ [Lorraine Schembri Orland],

Մատիաս Գոյոմար [Mattias Guyomar],

Իոանիս Կտիստակիս [Ioannis Ktistakis],

Անդրեաս Ջունդ [Andreas Zünd]՝ *դատավորներ,*

եւ Սյորեն Պրեբենսեն [Søren Prebensen]՝ *Մեծ պալատի քարտուղարի տեղակալ,*

2022 թվականի հունվարի 13-ին եւ մարտի 16-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ խորհրդատվական կարծիքը, որն ընդունվեց նշված վերջին օրը.

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Դատարան) Քարտուղարին 2021 թվականի փետրվարի 1-ին ուղարկված գրությամբ Հայաստանի վճռաբեկ դատարանը, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի թիվ 16 արձանագրության (Թիվ 16 արձանագրություն) 1-ին հոդվածի համաձայն, դիմել է Դատարան՝ ստորեւ ներկայացված 10-րդ պարբերությունում նշված հարցի վերաբերյալ խորհրդատվական կարծիք տրամադրելու խնդրանքով:

2. 2021 թվականի մարտի 11-ին Վճռաբեկ դատարանը Դատարանի պահանջով լրացուցիչ նյութեր եւ պարզաբանումներ է տրամադրել: Հետեւաբար խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ դիմումը Դատարանը պաշտոնապես ներկայացված է համարել վերջին ամսաթվին:

3. 2021 թվականի մայիսի 10-ին Դատարանի Մեծ պալատի հինգ դատավորներից բաղկացած խորհուրդը, որը ձեւավորվել է Թիվ 16 արձանագրության 2-րդ հոդվածի 3-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 93-րդ կանոնի 1-ին կետին համապատասխան, որոշել է ընդունել դիմումը:

4. Մեծ պալատի կազմը որոշվել է 2021 թվականի մայիսի 12-ին՝ 24-րդ կանոնի 2(ը) կետին եւ 94-րդ կանոնի 1-ին կետին համապատասխան:

5. 2021 թվականի մայիսի 12-ի գրություններով Քարտուղարը ներպետական վարույթների կողմերին տեղեկացրել է այն մասին, որ Նախագահը նրանց առաջարկում է մինչեւ 2021 թվականի հուլիսի 2-ը Դատարան ներկայացնել խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ դիմումին առնչվող գրավոր

դիտարկումներ (Թիվ 16 արձանագրության 3-րդ հոդված եւ Դատարանի կանոնակարգի 94-րդ կանոնի 3-րդ կետ): Նշված ժամկետում գրավոր դիտարկումներ ներկայացվել են Հայաստանի գլխավոր դատախազության եւ պրն Հ.Մ.-ի ու պրն Ա.Ա.-ի կողմից:

6. Հայաստանի կառավարությունը (Կառավարություն) գրավոր դիտարկումներ է ներկայացրել Թիվ 16 արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն: Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը չի օգտվել այդ իրավունքից:

7. Գրավոր դիտարկումներ են ստացվել նաեւ մի խումբ հասարակական կազմակերպություններից (ՌԵԴՐԵՍՍ, Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա, ԽՎՔԳ-ների (Խոշտանգումների վերացմանն ուղղված քրիստոնեական գործողությունների) միջազգային դաշնություն, Խոշտանգումների զոհերի միջազգային վերականգնողական խորհուրդ եւ Խոշտանգումների դեմ պայքարի համաշխարհային կազմակերպություն), որոնք Նախագահից ներգրավվելու թույլտվություն էին ստացել (Թիվ 16 արձանագրության 3-րդ հոդված):

8. Ստացված դիտարկումների պատճենները փոխանցվել են Վճռաբեկ դատարանին, որը որեւէ դիտարկում չի ներկայացրել (94-րդ կանոնի 5-րդ կետ):

9. Գրավոր ընթացակարգի ավարտից հետո Մեծ պալատի Նախագահը կայացրել է որոշում այն մասին, որ բանավոր լսում տեղի չի ունենալու (94-րդ կանոնի 6-րդ կետ):

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԸ

10. Խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ դիմումում առաջադրված հարցը ձեւակերպված է հետեւյալ կերպ.

«Արդյո՞ք խոշտանգման կամ դրան հավասարեցված այլ հանցագործության համար քրեական պատասխանատվության նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելը, միջազգային իրավունքի աղբյուրներին հղում կատարելով, կհամապատասխանի Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին, եթե ներպետական իրավունքում չկա քրեական պատասխանատվության նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու պահանջ»:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

11. 2012 թվականի հոկտեմբերի 2-ին Դատարանը գտել է, որ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործում [Virabyan v. Armenia]* (թիվ 40094/05, §§ 165-179, 2012 թվականի հոկտեմբերի 2) տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում (եւ՝ նյութաիրավական, եւ՝ ընթացակարգային): Այն վճռել է, որ 2004 թվականի ապրիլին ոստիկանությունում արգելանքի տակ պահվելու վայրում պրն Վիրաբյանը ենթարկվել է խոշտանգումների, եւ որ իշխանությունները չեն իրականացրել վատ վերաբերմունքի վերաբերյալ նրա պնդումների մասով արդյունավետ քննություն: Ոստիկանության ծառայողների նկատմամբ չի հարուցվել քրեական հետապնդում, եւ տվյալ ժամանակահատվածում հարուցված միակ քրեական գործը (թիվ 27203404), որն ավելի ուշ կարճվել է, եղել է ոստիկանության ծառայողներից մեկի՝ խոշտանգում իրականացնող ենթադրյալ անձանցից մեկի նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառելու համար Վիրաբյանի դեմ հարուցված գործը:

12. Դատարանի՝ 2014 թվականի օգոստոսի 21-ի վճռից հետո թիվ 27203404 քրեական գործը վերսկսվել է:

13. Քննիչը 2016 թվականի մայիսի 10-ին այդ քրեական գործի նյութերի հիման վրա հարուցել է նոր քրեական գործ (թիվ 62212316)՝ Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի պաշտոնատար անձի կողմից բռնությամբ զուգորդվող այնպիսի գործողություններ կատարելու համար, որոնք դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից, նախատեսվում է պատիժ (տե՛ս ստորել՝ 42-րդ պարբերությունը): Նա նաեւ որոշել է առանձնացնել այդ գործն առանձին վարույթների խմբով:

14. 2017 թվականի փետրվարի 17-ին եւ 20-ին դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու մեջ ներգրավված ոստիկանության ծառայողներից երկուսին՝ պրն Հ.Մ.-ին եւ պրն Ա.Ա.-ին, առաջադրվել է մեղադրանք վերելում նշված՝ 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

15. 2017 թվականի մարտի 10-ին քննիչը հանել է ոստիկանության ծառայողներին առաջադրված մեղադրանքները եւ համապատասխան վաղեմության ժամկետը (տասը տարի) լրանալու հիմքով կարճել է թիվ 62212316 քրեական գործը՝ հավանաբար հիմնվելով ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի վրա (տե՛ս ստորել՝ 40-րդ եւ 44-րդ պարբերությունները):

16. 2017 թվականի դեկտեմբերի 15-ին դատախազը բեկանել է այդ որոշումը՝ գտնելով, որ քննիչը չի ուսումնասիրել, թե արդյոք վարույթը կարճելը համատեղելի է միջազգային իրավունքի հետ (դատախազը մասնավորապես հղում է կատարել *Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի [Mocanu and Others v. Romania]* գործին ([GC] [ՄՊ], թիվ 10865/09 եւ եւս 2-ը, § 326, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ)):

17. Քրեական գործով վարույթը վերսկսվել է, իսկ այնուհետեւ գործն ուղարկվել է դատական քննության:

18. 2019 թվականի փետրվարի 22-ին Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը կայացրել է իր վճիռը: Դատարանը քննել է ոստիկանության երկու ծառայողներին առաջադրված մեղադրանքները եւ եզրակացրել, որ նրանք կատարել են հանցանք եւ ենթակա են քրեական պատասխանատվության՝ ՔՕ-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

Այդպիսով դատարանն ի սկզբանե վճռել է, որ ոստիկանության ծառայողների դեմ հարուցված քրեական գործը չի կարող կարճվել, իսկ քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա (տե՛ս ստորել՝ 44-րդ պարբերությունը), քանի որ ոստիկանության ծառայողները «չեն ընդունել իրենց մեղքը»: Այնուամենայնիվ, հղում կատարելով ՔՕ-ի 75-րդ հոդվածին եւ ՔԴՕ-ի 35-րդ հոդվածին (տե՛ս ստորել՝ 40-41-րդ եւ 44-48-րդ պարբերությունները) եւ այն հանգամանքին, որ ոստիկանության ծառայողների դեմ հարուցված քրեական գործը կարճվել էր համապատասխան վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով (տե՛ս վերելում՝ 15-րդ պարբերությունը)՝ դատարանը նաեւ համարել է, որ քրեական գործի վերսկսումը եւ ոստիկանության ծառայողների մասով մեղադրական եզրակացությունը՝ *Մոկանուն եւ այլք* գործին հղմամբ, եղել են անընդունելի, քանի որ դատախազությունը չի պարզաբանել, թե ինչու այդ գործում ներկայացված դիրքորոշումը պետք է գերակայի ՔՕ-ի 75-րդ հոդվածի եւ ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների նկատմամբ:

19. Այն նշել է, որ «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան (ՄԱԿԽԴԿ) չի պարունակում վաղեմության ժամկետների կիրառումն արգելող որեւէ դրույթ, այնպես որ Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների դեմ կոմիտեն (ԽԴԿ) այս խնդիրը բարձրացրել է միայն խորհրդատվական հիմունքներով՝ առաջարկելով, որ Հայաստանի իշխանություններն իրականացնեն խոշտանգումների գործերով վաղեմության ժամկետի վերացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ: Այնուամենայնիվ, թեւեւ ԽԴԿ-ն եւ Հայաստանի

իշխանություններն ընդունել են օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը, միակ կատարված փոփոխությունը եղել է ՔՕ-ում նոր՝ 309.1 հոդվածի ներառումը, որով սահմանվում է խոշտանգման հանցանքը (տե՛ս ստորել՝ 43-րդ պարբերությունը), մինչդեռ ՔՕ-ի 75-րդ հոդվածում կամ ՔԴՕ-ի 35-րդ հոդվածում չի կատարվել որեւէ փոփոխություն՝ չնայած այն հանգամանքին, որ ՔՕ-ի 75-րդ հոդվածով նախատեսվում էր այն հանցանքների սպառիչ ցանկը, որոնց նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի չէին կամ կիրառելի էին որոշ սահմանափակումներով: Դա նշանակում էր, որ ՔՕ-ի 75-րդ հոդվածում նշված ցանկում չընդգրկված հանցանքների նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելու մասով իրավական սահմանափակումներ առկա չեն եղել, այդ թվում՝ այն անձանց նկատմամբ, որոնք խոշտանգման բնույթի արարք են կատարել:

20. Ինչ վերաբերում է Կոնվենցիային, ապա դատարանը վճռել է, որ այն չի պարունակում վաղեմության ժամկետների կիրառման հստակ սահմանափակումներ՝ խոշտանգում եւ վատ վերաբերմունքի այլ ձեւեր պարունակող գործերի դեպքում, իսկ Դատարանի վճիռները չեն ինկորպորացվել ներպետական իրավունքում, եւ ցանկացած դեպքում Հայաստանը չի եղել *Մոկանուն եւ այլք* գործի (վերելում հիշատակված) կողմ: Հղում կատարելով Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասին՝ դատարանը եզրակացրել է (տե՛ս ստորել՝ 34-րդ պարբերությունը), որ այդ հանգամանքներում ՔՕ-ի 75-րդ հոդվածի եւ Կոնվենցիայի դրույթների միջեւ առկա չէ որեւէ հակասություն: Դատարանը նաեւ վճռել է, որ Դատարանի վերը նշված վճիռը կիրառելիս, որը մինչեւ 2014 թվականը չէր կայացվել, դատախազը հաշվի չի առել ոչ բարենպաստ քրեական իրավունքների եւ Քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրված այլ իրավական ակտերի (տե՛ս ստորել՝ 38-րդ պարբերությունը) եւ Կոնվենցիայի հետադարձ ուժի արգելքը եւ հետեւաբար խախտել է այդ փաստաթղթերով երաշխավորված՝ մեղադրյալի իրավունքները:



21. Հաշվի առնելով վերոնշյալը՝ գործը քննող դատարանը եզրակացրել է, որ ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված վաղեմության ժամկետը մեղադրվող անձանց գործով կիրառելի է եղել, եւ որ ՔՕ-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նրանք պետք է ազատվեին քրեական պատասխանատվությունից:

Որպես եզրակացություն, այն երկու մեղադրյալներին ճանաչել է մեղավոր ՔՕ-ի 309-րդ հոդվածի 2-րդ մասով, սակայն կիրառելով ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վաղեմության ժամկետը՝ նրանց ազատել է քրեական պատասխանատվությունից:

22. 2019 թվականի մարտի 28-ին դատախազը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պնդելով, որ վաղեմության ժամկետ կիրառելը եւ մեղադրյալին քրեական պատասխանատվությունից ազատելը խախտել է Կոնվենցիայի պահանջները, որոնք արգելում են վաղեմության ժամկետի կիրառումը խոշտանգման գործերով: Այդ առնչությամբ դատախազը հղում է կատարել ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության մեջ նշված բացառությանը (տե՛ս ստորեւ՝ 41-րդ պարբերությունը) եւ նշել, որ թեեւ ՄԱԿԽԴԿ-ն եւ Կոնվենցիան հստակ չեն արգելում վաղեմության ժամկետի կիրառումը խոշտանգումների գործերում, եւ՝ ԽԴԿ-ն իր թիվ 3 ընդհանուր մեկնաբանության մեջ (§§ 38 եւ 40), եւ՝ Դատարանը *Օկալին ընդդեմ Թուրքիայի [Okkali v. Turkey]* (թիվ 52067/99, § 76, ՄԻԵԴ 2006-XII (քաղվածքներ)) եւ *Մոկանուն եւ այլք* (վերելում հիշատակված) գործերով իր վճիռներում սահմանել են նման պարտավորություն: Դատարանի վճիռները Կոնվենցիայի անբաժանելի մասն են եւ ուղղակիորեն կիրառելի են: Բացի այդ, խոշտանգման եւ վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքը *jus cogens* (պարտադիր բնույթ ունեցող) նորմ է, եւ այդ արարքների գործերով վաղեմության ժամկետների կիրառման միջոցով քրեական պատասխանատվությունից ազատումը հանգեցնում է պետության միջազգային պարտավորությունների խախտման: Դատախազը պահանջել է չկիրառել ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ մեղադրյալի նկատմամբ կիրառել համապատասխան պատիժ:

23. 2019 թվականի ապրիլի 4-ին մեղադրյալը նույնպես ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պնդելով, որ վճիռը հիմնավորված չէր, եւ որ իրենք անմեղ էին:

24. 2019 թվականի հուլիսի 4-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է երկու վերաքննիչ բողոքները եւ Առաջին ատյանի դատարանի վճիռը թողել անփոփոխ: Այն վճռել է, որ ներպետական իրավունքով սահմանված պահանջները թույլ չեն տվել դատարաններին այս կոնկրետ գործով ուղղակիորեն կիրառել Դատարանի նախադեպային իրավունքը՝ վաղեմության ժամկետները կիրառելու արգելքի մասով: Առաջին ատյանի դատարանի եզրահանգումներն այն մասին, որ ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն մեղադրյալը պետք է ազատվեր քրեական պատասխանատվությունից (տե՛ս ստորել՝ 40-րդ պարբերությունը), եղել են իրավաչափ եւ պատճառաբանված՝ հաշվի առնելով օրինականության եւ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքները պահպանելու անհրաժեշտությունը, այն պահանջը, որ անձի մեղավորության եւ պատժի հարցը պետք է որոշվի միայն քրեական իրավունքի նորմերով, եւ քրեական իրավունքն անալոգիայով կիրառելու անընդունելիությունը: Եթե, խախտելով այդ պահանջները՝ վաղեմության ժամկետները չկիրառվեն, ապա դա կհանգեցնի մեղադրյալի իրավունքների խախտման եւ կարող է առաջացնել իրավական անորոշություն եւ որակվել որպես կամայականություն:

25. 2019 թվականի օգոստոսի 30-ին դատախազը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ կրկնելով իր վերաքննիչ բողոքում բերված փաստարկները (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Նա նաեւ պնդել է, որ ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության մեջ նշված բացառությունը կիրառելի էր եւ այս գործով խախտվել էր, քանի որ խոշտանգման բնույթի արարքի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառումը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն արգելված էր: Որպես վերաքննիչ բողոքի ընդունելիության հիմքերից մեկը դատախազը հղում է կատարել ՔԴՕ-ի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետին (տե՛ս ստորել՝ 49-րդ պարբերությունը)՝ պնդելով, որ անհրաժեշտ էր լրամշակել օրենսդրությունը՝ ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված վաղեմության ժամկետների կիրառման

արգելքի մասով: Մասնավորապես անհրաժեշտ էր որոշել, թե արդյոք Դատարանի նախադեպային իրավունքի նորմերի եւ ՄԱԿԽԴԿ-ի լույսի ներքո սահմանված էր խոշտանգման եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի գործերով վաղեմության ժամկետների կիրառման բացարձակ արգելք:

26. 2019 թվականի նոյեմբերի 25-ին Վճռաբեկ դատարանը քննության է առել դատախազի վճռաբեկ բողոքը՝ գտնելով, որ բողոքը համապատասխանել է, *inter alia* (ի թիվս այլնի), ՔԴՕ-ի 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին:

27. Պարզվում է, որ մեղադրյալը եւս ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանը ճանաչել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

28. 2021 թվականի հունվարի 27-ին Վճռաբեկ դատարանն անցկացրել է դատական նիստ դատախազի բողոքի առնչությամբ, որին ներկա են եղել երկու կողմերը եւ ներկայացրել են իրենց դիրքորոշումները հիմնավորող փաստարկներ: Դատարանը դատախազին հարցրել է, *inter alia*, թե արդյոք ՔՕ-ի պահանջի համաձայն վաղեմության ժամկետը չկիրառելը հանգեցնում է մեղադրյալներից որեւէ մեկի՝ Կոնվենցիայով, այդ թվում՝ 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտման, որոնցով թույլատրվում է պատժի կիրառումը միայն օրենքի հիման վրա: Ըստ դատախազի՝ չի եղել նման վտանգ, քանի որ միջազգային իրավունքով արգելվել է վաղեմության ժամկետների կիրառումը, եւ 7-րդ հոդվածը չէր խախտվի, քանի որ պետք է հաշվի առնվեին ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող միջազգային նորմերը: Այնուհետեւ նրան խնդրել են մեկնաբանել, *inter alia*, ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության մեջ սահմանված բացառությունը, այդ թվում՝ ի թիվս այլնի, թե արդյոք նա գիտեր վաղեմության ժամկետի կիրառումն արգելող որեւէ միջազգային պայմանագիր, ինչին ի պատասխան դատախազը հղում է կատարել Դատարանի նախադեպային իրավունքին, ինչպես նաեւ ՄԱԿԽԴԿ-ին: Մեղադրյալը պնդել է, որ դատարանները նրանց ճշմարտացիորեն են ազատել

քրեական պատասխանատվությունից՝ կիրառելով օրենքով նախատեսված վաղեմության ժամկետը:

29. Նույն օրը Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել Դատարան ներկայացնել խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ դիմում:

Հղում կատարելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին, Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային, Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (ՀՄՔՏ) եզրակացություններին՝ *Դալարախազն ընդդեմ Ֆուրունջիայի* գործով (1998 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ IT-95-17/I-T գործով վճիռ, §§ 144-154), եւ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն Դատարանի նախադեպային իրավունքին՝ այդ դատարանն ի սկզբանե գտել է, որ խոշտանգումների արգելքը բացարձակ էր եւ հետեւաբար *jus cogens* նորմ էր: Պետությունները ստանձնել են նման արարքների արդյունավետ քննություն եւ դրանց համար պատիժ ապահովելու պարտավորություն, եւ նման արարքներ կատարող անձանց հայտնաբերումն ու պատասխանատվությունը դարձել են համընդհանուր միտում:

30. Ինչ վերաբերում է նման քրեական գործերով վաղեմության ժամկետների կիրառմանը, ապա Վճռաբեկ դատարանը նախ վերահաստատել է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի, ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասի, 309-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 309.1 հոդվածի բովանդակությունը (տե՛ս ստորեւ՝ 41-44-րդ պարբերությունները): Այն նշել է, որ ՀՄՔՏ-ն իր վերոնշյալ վճռում նշել է, որ միջազգային համայնքի կողմից խոշտանգման արգելքին *jus cogens* բնույթ հաղորդելու հետեւանքներից մեկը եղել է այն, որ խոշտանգումների մասով չի կարող կիրառվել վաղեմության ժամկետների մասին դրույթը: Մի շարք վճիռներում (մասնավորապես՝ *Եթերն ընդդեմ Թուրքիայի [Yeter v. Turkey]*, թիվ 33750/03, § 70, 2009 թվականի հունվարի 13, եւ վերելում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործը, § 326) Դատարանը վճռել է, որ

պետական պաշտոնատար անձի կողմից վատ վերաբերմունքի կամ խոշտանգման գործերով քրեական վարույթները չպետք է կարճվեն վաղեմության ժամկետների մասին դրույթի հիմքով, եւ որ ԽԴԿ-ն այդ մասով ընդգծել է, որ վաղեմության ժամկետը չպետք է կիրառվի խոշտանգման բնույթի արարքների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը նաեւ նշել է, որ վերոնշյալից բացի՝ Դատարանն ընդգծել է, որ վաղեմության ժամկետը չկիրառելու կարգը պետք է նաեւ համապատասխանի Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին (այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկին հողում է կատարել վերելում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործին, § 326): Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ լրացած վաղեմության ժամկետի վերականգնումը կանխելու նպատակով կարող է հղում կատարվել իրավական որոշակիության սկզբունքին: Հարկ է նաեւ նշել, որ պատերազմական հանցագործություններին առնչվող գործերով, որոնք եւս համարվում են *jus cogens* նորմ, Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի կողմից կատարված արարքների նկատմամբ վաղեմության ժամկետները կիրառելի չեն (տե՛ս *Կոնոնովն ընդդեմ Լատվիայի [ՄԴ] [Kononov v. Latvia [GC]]*, թիվ 36376/04, §§ 229-233, ՄԻԵԴ 2010):

31. Ավելին, Վճռաբեկ դատարանը նշել է, որ *Վիրաբյանի* գործով վճիռը կատարելիս Նախարարների կոմիտեն կարելուրել է խոշտանգման գործերով վաղեմության ժամկետները որպես ընդհանուր միջոց չկիրառել: Այդուհանդերձ, մինչ այժմ Հայաստանում չեն ընդունվել համապատասխան օրենքներ: Նման հանգամանքներում ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասում նշված նորմը (տե՛ս ստորել՝ 41-րդ պարբերությունը), համաձայն որի վաղեմության ժամկետների կիրառումը խաղաղության եւ մարդկության անվտանգության դեմ կոնկրետ հանցանքների մասով արգելվում է, դեռ կիրառելի է եղել: Միեւնույն ժամանակ օրենսդիր մարմինը նաեւ նշել է, որ վաղեմության ժամկետները չեն կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք կատարել են այնպիսի միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ, որոնց անդամակցել է Հայաստանը, եթե այդ պայմանագրերով արգելվում է վաղեմության ժամկետների կիրառումը:

32. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատախազի բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է եղել Դատարան ներկայացնել խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ դիմում՝ հաշվի առնելով խոշտանգումների արգելքի *jus cogens* բնույթի մասով Դատարանի եւ այլ միջազգային մարմինների կողմից մշակված իրավական չափանիշները՝ մի կողմից, եւ Կոնվենցիայի 7-րդ հոդվածին համապատասխանության կարելիությունը՝ մյուս կողմից: Հետեւաբար այն որոշել է Դատարանին խնդրել անդրադառնալ վերելում՝ 10-րդ պարբերությունում մեջբերված հարցին:

#### ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

33. Հայաստանի Սահմանադրության, Քրեական օրենսգրքի եւ Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները, ինչպես նաեւ Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային իրավունքն ունեն հետեւյալ բովանդակությունը:

##### 1. 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

34. 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ օրենքների նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

35. 72-րդ հոդվածով նախատեսվում է, որ ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին:

36. 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:

## II. 2003 ԹՎԱԿԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

37. 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ արարքի հանցավորությունը եւ պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

38. 13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

39. 19-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: 19-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ առանձնապես ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:

40. 75-րդ հոդվածի 1-րդ մասի 3-րդ կետով նախատեսվում է, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի: 75-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսվում է, որ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասնհինգ տարի:

41. 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ խաղաղության եւ մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված:

42. 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

43. 2015 թվականի հունիսի 9-ին ՔՕ-ում կատարվել են փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2015 թվականի հուլիսի 18-ին, եւ ավելացվել է նոր դրույթ՝ 309.1 հոդվածը, որով ներառվել է «խոշտանգումը»՝ որպես հանցանք, որը պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով (309.1 հոդվածի 1-ին մաս): Նույն արարքը, որը կատարվել է 309.1 հոդվածի 2-րդ մասում թվարկված ծանրացնող հանգամանքներում, պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով:



III. 1999 ԹՎԱԿԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

44. 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսվում է, որ քրեական գործ չի կարող հարուցվել եւ քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

45. 35-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ դատախազը, քննիչը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Դատախազն իրավասու է քրեական գործի վարույթը կարճելու նաեւ գործը դատարան ուղարկելուց հետո, բայց մինչեւ դատական նիստում գործի քննությունն սկսվելը:

46. 35-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Այդ հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:

47. 35-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում է, որ դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը:

48. 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ, *inter alia*, ՔՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված հիմքերով գործի վարույթի կարճում եւ քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

49. 414.2 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսվում է, որ վճարեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճարեկ դատարանը հանգում է այն հետետության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

#### IV. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

50. 2021 թվականի մայիսի 5-ին Հայաստանն ընդունել է նոր Քրեական օրենսգիրք, որն ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ին: Նոր օրենսգրքի համաձայն՝ պետական պաշտոնատար անձի կողմից խոշտանգման հանցանքի եւ լիազորությունները չարաշահելու կամ գերազանցելու հանցանքի նկատմամբ, որն ուղեկցվել է բռնության գործադրմամբ, վաղեմության ժամկետներ չեն կիրառվում:

#### V. ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

51. 2020 թվականի հունվարի 10-ի թիվ ԿԴ-3/0038/01/17 որոշման մեջ, որը վերաբերում էր մի քրեական գործի, որի դեպքում անցել էր կիրառելի վաղեմության ժամկետը, Վճարեկ դատարանը վճռել է.

«17. [ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի] վերլուծությունից երևում է, որ դրանում թվարկված են օրենքով սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են ինչպես քրեական հետապնդման հնարավորությունը, այնպես էլ քրեական գործի վարույթը: Նշված հանգամանքներից յուրաքանչյուրի բացահայտման դեպքում քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցման:

...

20. ... Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական գործի վարույթը եւ քրեական հետապնդումը բացառող հանգամանք ... Միեւնույն ժամանակ, քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով: Այսինքն՝ այն դեպքում, երբ անձը համաձայն չէ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու եւ գործի վարույթը կարճելու հետ, նրան պետք է հնարավորություն ընձեռնվի դատական քննության փուլում վիճարկելու իրեն առաջադրված մեղադրանքը:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Ընդ որում, դատական քննությունը ենթադրում է վարույթն ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ ու վճռաբեկ դատարաններում: Մասնավորապես դատարանը պետք է պարզի, թե արդյոք ամբաստանյալը համաձայն է, որ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով: Անձի համաձայնությունը ստանալու դեպքում դատարանը պարտավոր է դադարեցնել նրա նկատմամբ քրեական հետապնդումը, իսկ համաձայնության բացակայության դեպքում պետք է դատական քննությունը շարունակի ընդհանուր կարգով, սակայն դատավճիռ կայացնելիս՝ դադարեցնի անձի նկատմամբ քրեական հետապնդումը»:

52. Քանի որ նույն գործով մեղադրյալի նկատմամբ կիրառվել է համաներում, եւ նա ազատվել է պատժից, Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաեւ այդ հարցին, եւ վճռել, որ եթե Դատարանը ստիպված է եղել ընտրել համաներում կիրառելու կամ ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի համաձայն վաղեմության ժամկետ կիրառելու միջեւ, այն պարտավոր էր նախապատվությունը տալ վերջինին, քանի որ դրա իրավական հետեւանքներն ավելի նպաստավոր են եղել տվյալ անձի համար: Մասնավորապես համաներման կիրառումն անձին ազատել է միայն պատժից (մեղադրական դատավճռի դեպքում), մինչդեռ վաղեմության ժամկետի կիրառումն անձին ընդհանրապես ազատում է քրեական պատասխանատվությունից:

## ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

## I. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

**Ա. Դատարանի քննության շրջանակին վերաբերող ընդհանուր սկզբունքները**

53. Դատարանը վերահաստատում է, որ ինչպես նշված է Թիվ 16 արձանագրության նախաբանում, խորհրդատվական կարծիքի նպատակն է խթանել Դատարանի եւ ազգային իշխանությունների միջեւ փոխգործակցությունը եւ դրանով ամրապնդել Կոնվենցիայի կիրառումը՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, թույլ տալով ազգային դատարաններին եւ տրիբունալներին դիմել Դատարան «Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների մեկնաբանման կամ կիրառման սկզբունքային հարցերի» վերաբերյալ խորհրդատվական կարծիքների տրամադրման համար (Թիվ 16 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետ), որոնք ծագում են «[իր] կողմից քննվող գործի շրջանակներում» (Թիվ 16 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կետ): Ընթացակարգը միտված է ոչ թե վեճը Դատարանին փոխանցելուն, այլ դիմող դատարանին վերջինիս կողմից քննվող գործի վերաբերյալ որոշում կայացնելիս կոնվենցիոն հարցերի վերաբերյալ ուղղորդում տրամադրելուն: Դատարանը չունի գործի փաստերը գնահատելու կամ կոնվենցիոն իրավունքի լույսի ներքո ներպետական իրավունքը մեկնաբանելու վերաբերյալ կողմերի տեսակետների էությունը գնահատելու կամ վարույթների արդյունքների վերաբերյալ որոշում կայացնելու իրավազորություն: Նրա դերը սահմանափակվում է իրեն ներկայացված հարցերի վերաբերյալ կարծիք տրամադրելով: Դիմող դատարանը կամ տրիբունալը պետք է լուծի գործի մեջ ներկայացված հարցերը եւ անհրաժեշտության դեպքում անի եզրակացություններ, որոնք բխում են Դատարանի կողմից տրված կարծիքից,

ներպետական իրավունքի այն դրույթների մասով, որոնց հղում է կատարվել տվյալ գործում, եւ գործի արդյունքների մասով (տե՛ս *Արտերկրում գեստացիոն փոխնակ մայրության արդյունքում ծնված երեխայի եւ նախադասվող մոր միջեւ օրինական ծնող-երեխա հարաբերությունների՝ ներպետական իրավունքում ճանաչման վերաբերյալ խորհրդարական կարծիքը*, թիվ P16-2018-001, § 25, 2019 թվականի ապրիլի 10 (թիվ P16-2018-001 խորհրդատվական կարծիք)):

54. Թիվ 16 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերից Դատարանը եզրակացրել է, որ այդ Արձանագրության համաձայն նրա կողմից տրամադրվող կարծիքները «պետք է սահմանափակվեն այն կետերով, որոնք ուղղակիորեն կապված են ներպետական մակարդակում իրականացվող վարույթների հետ»: Դրանց արժեքը նաեւ նրանում է, որ դրանք ազգային դատարաններին տրամադրում են ուղղորդում՝ նմանատիպ գործերում կիրառելի՝ Կոնվենցիային առնչվող սկզբունքների հետ կապված հարցերի վերաբերյալ (նույն տեղում, §26):

55. Իր կարծիքը ձեւակերպելիս Դատարանը պատշաճ կերպով հաշվի է առնելու վարույթի մասնակիցների կողմից ներկայացված գրավոր դիտարկումները եւ փաստաթղթերը: Այդուհանդերձ, Դատարանի անելիքն իրեն ներկայացված բոլոր հիմքերին ու փաստարկներին պատասխանելը կամ իր պատասխանը մանրակրկիտ կերպով հիմնավորելը չէ. Թիվ 16 արձանագրության համաձայն՝ Դատարանի դերը ոչ թե մրցակցային վարույթների շրջանակներում պարտադիր կատարման ենթակա վճիռների միջոցով վիճելի գանգատների վերաբերյալ որոշումներ կայացնելն է, այլ հնարավորինս կարճ ժամկետում դիմող դատարանին կամ տրիբունալին վերջինիս կողմից քննվող գործի վերաբերյալ որոշում կայացնելիս կոնվենցիոն իրավունքների պահպանումն ապահովող ուղղորդում տրամադրելը (տե՛ս վերելում հիշատակված՝ թիվ P16-2018-001 խորհրդատվական կարծիքը, § 34):

## **Բ. Խորհրդատվական կարծիքի վերաբերյալ սույն դիմումի մասին ընդհանուր դիտարկումներ**

56. Դատարանն ի սկզբանե նշում է, որ ընթացքի մեջ գտնվող այն գործը, որի համատեքստում ներկայացվել է խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ սույն դիմումը, առաջացել է 2004 թվականի ապրիլին տեղի ունեցած գործողությունների արդյունքում, եւ որի առնչությամբ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով իր 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճռով Դատարանը միաձայն գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային եւ նյութաիրավական նորմերի խախտում (տե՛ս վերելում հիշատակված՝ *Վիրաբյանի* գործը, §§ 165-179): Հետեւաբար 2014 թվականի օգոստոսի 21-ին քրեական գործը վերսկսվել է՝ Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Դատարանի վճռի կատարումը Նախարարների կոմիտեի կողմից վերահսկման համատեքստում (որը դեռ փակված չէ): 2016 թվականի մայիսի 10-ին հարուցվել է նոր քրեական վարույթ, եւ 2017 թվականի փետրվարի 17-ին եւ 20-ին դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու մեջ ներգրավված ոստիկանության երկու ծառայող պրն Հ.Մ.-ին եւ պրն Ա.Ա.-ին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս վերելում՝ 12-14-րդ պարբերությունները): Թեեւ գործը քննող դատարանը գտել է, որ մեղադրյալները գործել են հանցագործություն՝ համաձայն այդ դրույթների, այն վճռել է, որ նրանք քրեական պատասխանատվությունից ազատվում են ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված տասը տարի վաղեմության ժամկետի ուժով (տե՛ս վերելում՝ 21-րդ պարբերությունը), որի կայացրած որոշումը Վերաքննիչ դատարանը թողել է անփոփոխ (տե՛ս վերելում՝ 24-րդ պարբերությունը): Տասը տարի ժամկետը լրացել է 2014 թվականի ապրիլին: Վճռաբեկ դատարանի կողմից հետագա բողոքարկման վերաբերյալ որոշում կայացնելու հարցը, որը նաեւ ստիպել է ներկայացնել խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ սույն դիմումը, այն է, թե արդյոք վարույթը պետք է դիտարկվի վերոնշյալ տասը տարի ժամկետի շրջանակում, կամ արդյոք այն պետք է դիտարկվի ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասում նշված

բացառությունների շրջանակում, որի դեպքում հանցանքների կոնկրետ տեսակների համար վաղեմության ժամկետը կիրառելի չէ (Հայաստանի մասնակցությամբ գործող միջազգային պայմանագրերով նախատեսված խաղաղության եւ մարդկության անվտանգության դեմ կոնկրետ հանցանքները. տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը):

57. Հետեւաբար Վճռաբեկ դատարանը խնդրել է Դատարանին պարզաբանել, թե արդյոք համատեղելի կլինի Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված՝ մեղադրյալների իրավունքների հետ, եթե ներպետական դատարանները խուսափեն կիրառել վաղեմության ժամկետը, որը կիրառելի է նրանց գործում՝ խոշտանգման եւ վատ վերաբերմունքի այլ ձեւերի արգելքին եւ այդ արարքները պատժելու պահանջին վերաբերող վերոնշյալ միջազգային կանոնի (տե՛ս վերելում՝ 29-32-րդ պարբերությունները), այդ թվում՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն: Այսպես ձեւակերպված հարցն անուղակիորեն ճանաչում է Հայաստանի Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում եւ ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասում շարադրված՝ Հայաստանի ներպետական համակարգում օրենքների աստիճանակարգությունը (տե՛ս վերելում՝ 34-րդ եւ 41-րդ պարբերությունները):

58. Նկատի ունենալով այն հանգամանքը, սույն դիմումը ձեւակերպելիս Վճռաբեկ դատարանը հիմնվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա (տե՛ս վերելում՝ 29-րդ պարբերությունը), նախքան կոնկրետ Կոնվենցիայի 7-րդ հոդվածին հղումով տրված հարցին անդրադառնալը Դատարանը նպատակահարմար է համարում վերահաստատել իր նախադեպային իրավունքը 3-րդ հոդվածի համաձայն՝ վաղեմության ժամկետների մասով այնքանով, որքանով դա առնչվում է սույն կարծիքին:

59. Դատարանն ի սկզբանե նշում է, որ այն ընդունել է, որ միջազգային իրավունքում խոշտանգման արգելքը ստացել է *jus cogens* կամ համընդհանուր պարտադիր նորմի կարգավիճակ (տես՝ *Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Al-Adsani v. the United Kingdom* [GC]], թիվ 35763/97,

§§ 60-61, ՄԻԵԴ 2001-XI): Բացի այդ, կարելի է հիշեցնել, որ *Մոկանուն եւ այլք* գլխավոր գործով (վերելում հիշատակված՝ § 326) վճռում, որին հղում է կատարել նաեւ Վճռաբեկ դատարանը, Դատարանը վճռել է հետեւյալը.

«Դատարանը նաեւ վճռել է, որ պետական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին վերաբերող գործերով քրեական վարույթը չպետք է դադարեցվի վաղեմության ժամկետի հիմքով, եւ նաեւ, որ այդ գործերով չպետք է թույլատրվեն համաներումների ու ներումների կիրառումը (տե՛ս *Աբդուլսամետ Յամանն ընդդեմ Թուրքիայի [Abdülşamet Yaman v. Turkey]*, թիվ 32446/96, § 55, 2004 թվականի նոյեմբերի 2), [վերելում հիշատակված՝ Եթերի գործը, § 70], եւ [«1989թ. դեկտեմբերի 21» *ասոցիացիան եւ այլք ընդդեմ Ռումինիայի» [Association “21 December 1989” and Others v. Romania]*, թիվ 33810/07 եւ 18817/08, § 144, 2011 թվականի մայիսի 24]): Ավելին, վաղեմության ժամկետը կիրառելու կարգը պետք է համատեղելի լինի Կոնվենցիայի պահանջներին: Հետեւաբար դժվար է ընդունել ոչ ճկուն վաղեմության ժամկետներ՝ առանց բացառությունների ընդունման (տե՛ս *mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով) Ռոմանն ընդդեմ Ֆինլանդիայի [Röman v. Finland]*, թիվ 13072/05, § 50, 2013 թվականի հունվարի 29):»

60. Փաստերի հիման վրա գտնելով, որ համապատասխան քննությունը հիմնականում կարճվել է քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով՝ Դատարանը վճռել է, որ դժվար է համարել, որ (2-րդ հոդվածից եւ) 3-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունները կատարվել են այն դեպքում, երբ քննությունը կարճվել է իշխանությունների անգործության հետեւանքով առաջացող՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործը, § 346):

61. Հետեւաբար Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգային երաշխիքները խախտվել են այն դեպքերում, երբ վաղեմության ժամկետները կիրառվել են իշխանությունների կողմից արագ եւ պատշաճ ջանասիրությամբ չգործելու արդյունքում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Բատին եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Bati and Others v. Turkey]*, թիվ 33097/96 եւ 57834/00, §§ 97 եւ 145-147, ՄԻԵԴ 2004-IV (քաղվածքներ). վերելում



հիշատակված՝ *Արդուլսամետր Յամանի* գործը § 59, *Եսիլը եւ Սեվիմն ընդդեմ Թուրքիայի [Yeşil and Sevim v. Turkey]*, թիվ 34738/04, §§ 38-42, 2007 թվականի հունիսի 5, *Էրդոդան Յիլմազը եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Erdoğan Yılmaz and Others v. Turkey]*, թիվ 19374/03, § 57, 2008 թվականի հոկտեմբերի 14, *Էրդալ Ասլանն ընդդեմ Թուրքիայի [Erdal Aslan v. Turkey]*, թիվ 25060/02 եւ 1705/03, §§ 75-79, 2008 թվականի դեկտեմբերի 2, *Պադուրետն ընդդեմ Մոլդովայի [Păduret v. Moldova]*, թիվ 33134/03, § 75, 2010 թվականի հունվարի 5, *Կառազյոզը եւ այլք ընդդեմ Թուրքիայի [Karagöz and Others v. Turkey]*, թիվ 14352/05 եւ եւս 2-ը, §§ 53-55, 2010 թվականի հուլիսի 13, *Սավինն ընդդեմ Ուկրաինայի [Savin v. Ukraine]*, թիվ 34725/08, §§ 70-71, 2012 թվականի փետրվարի 16, *Ուզյուրն ընդդեմ Թուրքիայի [Uğur v. Turkey]*, թիվ 37308/05, § 105, 2015 թվականի հունվարի 13 եւ *Բարուվոլն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 9183/09, § 42, 2021 թվականի հունիսի 15):

62. Հարկ է նաեւ հիշեցնել, որ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում այն դեպքում, երբ քրեական հետապնդման համար վաղեմության ժամկետը լրացել է խոշտանգման բնույթի արարքները կամ վատ վերաբերմունքի այլ ձեւեր ներպետական իշխանությունների կողմից անհամարժեքորեն պակաս ծանր հանցանք որակելու հետեւանքով, ինչը հանգեցրել է ավելի կարճ վաղեմության ժամկետների կիրառման եւ հանցանքը կատարող անձին թույլ է տվել խուսափել քրեական պատասխանատվությունից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված՝ *Պադուրետի* գործը, § 75, *Վելեվն ընդդեմ Բուլղարիայի [Veleven v. Bulgaria]*, թիվ 43531/08, § 61, 2013 թվականի ապրիլի 16, *Օ.Ռ.-ն եւ Լ.Ռ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [O.R. and L.R. v. the Republic of Moldova]*, թիվ 24129/11, §§ 73-74, 2018 թվականի հոկտեմբերի 30):

63. Ավելին, մի քանի առիթներով Դատարանը գտել է, որ 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները չեն ապահովվել հիմնականում ներպետական իրավունքում խոշտանգում համարվող արարքների պատշաճ պատիժ ապահովող համապատասխան դրույթների բացակայության պատճառով (տե՛ս *Չեսլարոն*

ընդդեմ Իտալիայի [*Cestaro v. Italy*], թիվ 6884/11, § §§ 218-226, 2015 թվականի ապրիլի 7, Ացոլինան եւ այլք ընդդեմ Իտալիայի [*Azzolina and Others v. Italy*], թիվ 28923/09 եւ 67599/10, § 149-165, 2017 թվականի հոկտեմբերի 26, *Չիրինոն եւ Ռեննեն ընդդեմ Իտալիայի* [*Cirino and Renne v. Italy*], թիվ 2539/13 եւ 4705/13, §§ 106-112, 2017 թվականի հոկտեմբերի 26, եւ *Բլեյրը եւ այլք ընդդեմ Իտալիայի* [*Blair and Others v. Italy*], թիվ 1442/14 եւ եւս 2-ը, § 118-134, 2017 թվականի հոկտեմբերի 26): Այդ առնչությամբ Դատարանը նաեւ նշել է, որ տվյալ հանցանքների նկատմամբ կիրառվել է վաղեմության ժամկետների մասին դրույթը, «մի հանգամանք, որն ինքնին [հակասում է] խոշտանգումներին կամ վատ վերաբերմունքի այլ ձեւերին վերաբերող նախադեպային իրավունքին» (տե՛ս վերելում հիշատակված՝ *Արդուսամետր Յամանի գործը*, § 55, վերելում հիշատակված՝ *Չեստարոյի գործը*, § 208, վերելում հիշատակված՝ *Չիրինոյի եւ Ռեննեի գործը*, § 110, եւ վերելում հիշատակված՝ *Բլեյրը եւ այլք գործը*, § 118-134):

64. Դատարանը հաշվի է առնում այն դժվարությունները, որոնք կարող են առաջանալ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի այլ ձեւերի գործերով վճիռները կատարելու ընթացքում՝ անդամ պետությունների ներպետական համակարգերում վաղեմության ժամկետի վերաբերյալ դրույթի առկայության պատճառով: Այնուամենայնիվ, այն նշում է, որ մի շարք անդամ պետություններ ձեռնարկել են տարբեր միջոցներ՝ այս խնդիրը լուծելու եւ այդպիսով նման արարքներ գործող պետական պաշտոնատար անձանց անպատժելիությունը կանխելու համար: Այսպես՝ մի քանի անդամ պետություններ, այդ թվում՝ Թուրքիան, Մոլդովայի Հանրապետությունը, Ռումինիան եւ այժմ Հայաստանը փոփոխություններ են կատարել իրենց օրենսդրության մեջ՝ չեղարկելով վաղեմության ժամկետի կիրառումը խոշտանգման բնույթի արարքների նկատմամբ: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Իտալիայում, որպեսզի քրեական վարույթների իրականացումն անհնար չդառնա վաղեմության ժամկետները լրանալու հիմքով, 2020 թվականին օրենքում կատարվել է փոփոխություն, որով նախատեսվում է, որ առաջին ատյանի դատարանի վճիռը հետո վաղեմության ժամկետը կասեցվում է քրեական վարույթի մնացած ամբողջ ժամանակահատվածում:

65. Դատարանը նշում է, որ *Վիրաբյանի* գործով (վերելում հիշատակված) այն գտել է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ դիմումատուն ենթարկվել է խոշտանգման, եւ որ իշխանությունները չեն իրականացրել ենթադրյալ վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն: Այդուհանդերձ, Դատարանի կարծիքով՝ անընդունելի կլինի, եթե ազգային իշխանությունները Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված իրենց դրական պարտավորությունները չկատարելու համար հատուցեն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի երաշխիքների հաշվին, որոնցից մեկն այն է, որ քրեական իրավունքը չպետք է մեկնաբանվի լայնորեն՝ ի վնաս մեղադրյալի (տե՛ս *Մյումյուն ընդդեմ Բուլղարիայի [Myumyun v. Bulgaria]*, թիվ 67258/13, § 76, 2015 թվականի նոյեմբերի 3, վերջին պահանջի մասով հղումներ կատարելով *Բաշկայան եւ Օկստոդլուն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Başkaya and Okcuoğlu v. Turkey [GC]]* գործին, թիվ 23536/94 եւ 24408/94, § 36, ՄԻԵԴ 1999 IV. վերելում հիշատակված՝ *Կոնտնովի* գործը, § 185 եւ *Դել Ռիո Պրադան ընդդեմ Իսպանիայի [ՄՊ] [Del Río Prada v. Spain [GC]]*, թիվ 42750/09, § 78, ՄԻԵԴ 2013):

66. Մասնավորապես եւ սույն խորհրդատվական կարծիքի նպատակներով հարկ է նշել, որ Դատարանի նախադեպային իրավունքի ներկա վիճակից չի բխում, որ Կոնվենցիայի համաձայն Պայմանավորվող կողմից պահանջվում է չկիրառել կիրառելի վաղեմության ժամկետը եւ այդպիսով արդյունավետորեն վերականգնել լրացած վաղեմության ժամկետը: Վարույթը վերսկսելու համատեքստում Դատարանը ճանաչել է, որ կարող են լինել իրավիճակներ, երբ *դե յուրե* կամ *դե ֆակտո* հնարավոր չէ վերսկսել այն միջադեպերի քրեական գործով քննությունները, որոնք կապված են Դատարանի կողմից քննվող գանգատների հետ: Նման իրավիճակներ կարող են առաջանալ, օրինակ, այն գործերի դեպքում, երբ հանցանքը կատարող անձինք արդարացվել են, եւ նրանց նկատմամբ չի կարող իրականացվել դատական քննություն նույն հանցանքի համար, կամ այն գործերի դեպքում, երբ քրեական վարույթը չի կարող իրականացվել՝ ազգային օրենսդրությամբ նախատեսված վաղեմության ժամկետը

լրանալու հիմքով: Իսկապես, վաղեմության ժամկետն անցնելու հետեանքով կարճված քրեական վարույթները վերսկսելը կարող է առաջացնել խնդիրներ իրավական որոշակիության իմաստով եւ հետեաբար կարող է ազդել մեղադրյալի՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքների վրա (տե՛ս *Տաշդեմիրն ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [*Taşdemir v. Turkey* (dec.)], թիվ 52538/09, § 14, 2019 թվականի մարտի 12):

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ

67. Անդրադառնալով այն կոնկրետ հարցին, որին Վճռաբեկ դատարանը խնդրել է Դատարանին պատասխանել, Դատարանը նպատակահարմար է գտնում նախ վերահաստատել վերջինիս նախադեպային իրավունքով մշակված ընդհանուր սկզբունքները՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի շրջանակներում իրավական որոշակիության եւ կանխատեսելիության պահանջների մասով: *Դել Ռիո Պրադայի* գործում (վերելում հիշատակված. տե՛ս նաեւ *Ռոհլենան ընդդեմ Չեխիայի Հանրապետության* [*ՄՊ*] [*Rohlena v. the Czech Republic* [GC]], թիվ 59552/08, § 50, ՄԻԵԴ 2015) այն սահմանել է հետեյալ ընդհանուր սկզբունքները (որոնք նաեւ վերարտադրվել են Հանցանքի սահմանման մեջ «բլանկետային հղում» կամ «օրենսդրություն՝ ըստ հղման» տեխնիկայի կիրառման եւ հանցանքի կատարման պահին գործող քրեական օրենքի ու փոփոխված քրեական օրենքի համեմատության չափորոշիչների վերաբերյալ խորհրդատվական կարծիքում, թիվ P16-2019-001, § 60, 2020 թվականի մայիսի 29 (Թիվ P16-2019-001 խորհրդատվական կարծիք), որի համար դիմել է Հայաստանի սահմանադրական դատարանը):

*«ա) Nullum crimen, nulla poena sine lege (չկա հանցագործություն եւ պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով)*

77. 7-րդ հոդվածով ամրագրված երաշխիքը, որն իրավունքի գերակայության էական տարրն է, կարեւոր տեղ է զբաղեցնում Կոնվենցիայով սահմանված իրավունքների պաշտպանության համակարգում, քանի որ դրանով ընդգծվում է այն փաստը, որ չի

թույլատրվում դրանից 15-րդ հոդվածով նախատեսված ոչ մի շեղում նույնիսկ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ: Ինչպես որ դրա առարկան ու նպատակն է ենթադրում, այն պետք է մեկնաբանվի եւ կիրառվի այնպես, որ դրանով ապահովվի արդյունավետ պաշտպանություն կամայական հետապնդումից, դատապարտումից եւ պատժից (տե՛ս *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [S.W. v. the United Kingdom]*, 1995 թվականի նոյեմբերի 22, § 34, շարք Ա թիվ 335-Բ, *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [C.R. v. the United Kingdom]*, 1995 թվականի նոյեմբերի 22, § 32, շարք Ա թիվ 335-Գ եւ *Կաֆկարիսն ընդդեմ Կիպրոսի [ՄՊ] [Kafkaris v. Cyprus [GC]]*, թիվ 21906/04, ... § 137, ՄԻԵԴ 2008):

78. Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի սահմանափակվում ի վնաս մեղադրյալի՝ օրենքի՝ հետադարձ ուժով կիրառման արգելմամբ (օրենքի հետադարձ ուժով պատիժ կիրառելու վերաբերյալ տե՛ս *Վելչն ընդդեմ Միացյալ Թագավորության [Welch v. the United Kingdom]*, 1995 թվականի փետրվարի 9, § 36, շարք Ա թիվ 307 Ա, *Ջամիլն ընդդեմ Ֆրանսիայի [Jamil v. France]*, 1995 թվականի հունիսի 8, § 35, շարք Ա թիվ 317-Բ, *Էսերը եւ Ջեյրեքն ընդդեմ Թուրքիայի [Ecer and Zeyrek v. Turkey]*, թիվ 29295/95 եւ 29363/95, § 36, ՄԻԵԴ 2001-II եւ *Միհայ Թոման ընդդեմ Ռումինիայի [Mihai Toma v. Romania]*, թիվ 1051/06, §§ 26-31, 2012 թվականի հունվարի 24): Այն նաեւ սահմանում է ավելի ընդհանուր բնույթի սկզբունք, այն է՝ հանցագործությունը կարող է սահմանվել, եւ պատիժը կարող է նախատեսվել միայն օրենքով (*nullum crimen, nulla poena sine lege*՝ տե՛ս *Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի [Kokkinakis v. Greece]*, 1993 թվականի մայիսի 25, § 52, շարք Ա թիվ 260-Ա): Թեեւ սա թույլ չի տալիս մասնավորապես առկա հանցատեսակների շրջանակում ներառել այն արարքները, որոնք նախկինում հանցագործություններ չէին համարվել, սակայն սրանով սահմանվում է նաեւ այն սկզբունքը, որ քրեական իրավունքը չպետք է լայնորեն մեկնաբանվի ի վնաս մեղադրյալի, օրինակ՝ անալոգիայով (տե՛ս *Քոյեմին եւ այլք ընդդեմ Բելգիայի [Coëme and Others v. Belgium]*, թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 եւ 33210/96, § 145, ՄԻԵԴ 2000-VII. պատիժն անալոգիայով կիրառելու օրինակի համար տե՛ս *Բաշկայան եւ Օկսուողլուն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ] [Başkaya and Okçuoğlu v. Turkey [GC]]*, թիվ 23536/94 եւ 24408/94, §§ 42 43, ՄԻԵԴ 1999 IV): 23536/94 եւ 24408 մյուս թվերը, §§ 42-43, ՄԻԵԴ 1999-VI):

79. Սրանից հետեւում է, որ հանցագործությունները եւ համապատասխան պատիժները պետք է հստակորեն սահմանված լինեն օրենքով: Այս պահանջը համարվում է կատարված, եթե համապատասխան նորմի ձեւակերպումից, անհրաժեշտության դեպքում նաեւ դատարանի կողմից արված մեկնաբանությունից օգտվելով եւ համապատասխան իրավաբանական խորհրդատվություն ստանալուց հետո անձի համար կարող է հասկանալի

դառնալ, թե որ գործողությունների եւ անգործության համար ինքը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, եւ այդ առնչությամբ ինչ պատիժ կարող է կիրառվել իր նկատմամբ (տե՛ս *Կանտոնին ընդդեմ Ֆրանսիայի [Cantoni v. France]*, 1996 թվականի նոյեմբերի 15, § 29, Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1996 -V, եւ վերետում հիշատակված՝ *Կաֆկարիսի* գործը, § 140):

80. Հետեւաբար Դատարանը պետք է հաստատի, որ այն պահին, երբ մեղադրյալը կատարել է արարքը, որը հանգեցրել է վերջինիս քրեական հետապնդմանը եւ նրան մեղադրանք առաջադրելուն, եղել է գործող իրավական դրույթ, որով այդ արարքը պատժելի է եղել, եւ որի համար սահմանված պատիժը չի գերազանցել այդ դրույթով ամրագրված սահմանաչափերը (տե՛ս վերետում հիշատակված՝ *Քոյեմին* եւ այլք գործը, § 145, եւ *Աշուրն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ] [Achour v. France [GC]]*, թիվ 67335/01, § 43, ՄԻԵԴ 2006-IV):

...

գ) Քրեական օրենքի կանխատեսելիությունը

91. «Օրենքի» մասին խոսելիս 7-րդ հոդվածում հիշատակվում է նույն այն հասկացությունը, որին Կոնվենցիայով հղում է արվում մնացած տեղերում այդ եզրույթն օգտագործելիս. հասկացություն, որը ներառում է ստատուտային, ինչպես նաեւ նախադեպային իրավունքները եւ ենթադրում է որակական պահանջներ, հատկապես հասանելիության եւ կանխատեսելիության պահանջները (տե՛ս վերետում հիշատակված՝ Կոկկինակիսի գործը, §§ 40-41, վերետում հիշատակված՝ Կանտոնիի գործը, § 29, վերետում հիշատակված՝ *Քոյեմին* եւ այլք գործը, § 145, եւ Ե.Կ.-ն ընդդեմ Թուրքիայի [E.K. v. Turkey], թիվ 28496/95, § 51, 2002 թվականի փետրվարի 7): Այս որակական պահանջները պետք է բավարարվեն թե՛ հանցագործությունը եւ թե՛ դրա համար նախատեսվող պատիժը սահմանելու առումով:

92. Այս սկզբունքից տրամաբանորեն հետետում է, որ օրենքները պետք է լինեն ընդհանուր կիրառության, եւ որ օրենսդրական ակտերի ձեւակերպումները ոչ միշտ են ճշգրիտ: Նորմատիվ կարգավորման ստանդարտ տեխնիկաներից մեկը սպառիչ ցանկերի փոխարեն ընդհանուր դասակարգումների օգտագործումն է: Հետեւապես բազմաթիվ օրենքներ անխուսափելիորեն պարունակում են ձեւակերպումներ, որոնք այս կամ այն աստիճանի անորոշություն են պարունակում, եւ որոնց մեկնաբանումն ու կիրարկումը պրակտիկայի խնդիր է (տե՛ս վերետում հիշատակված՝ Կոկկինակիսի գործը, § 40, եւ վերետում հիշատակված՝ *Կանտոնիի գործը*, § 31): Ինչքան էլ որ իրավական դրույթը լինի հստակորեն ձեւակերպված, այնուամենայնիվ, ցանկացած իրավական համակարգում, այդ թվում՝ քրեական իրավունքում անխուսափելիորեն առկա է դատարանի կողմից

մեկնաբանման տարրը: Միշտ էլ առկա է լինելու կասկածելի կետերի պարզաբանման եւ փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն: Եվ կրկին, թեեւ որոշակիությունը շատ ցանկալի է, այն կարող է հանգեցնել չափից շատ բարձր աստիճանի անփոփոխելիության, եւ [մինչդեռ] օրենքը պետք է զարգանա փոփոխվող հանգամանքներին համընթաց (տե՛ս վերելում հիշատակված՝ *Կաֆկարիսի* գործը, § 141):

93. Դատարաններին դատական որոշումներ ընդունելու դեր վերապահելը հենց նպատակ ունի ցրել մեկնաբանման հետ կապված այդպիսի կասկածները, որոնք դեռեւս առկա են (նույն տեղում): Դատական իրավաստեղծ գործունեության միջոցով քրեական իրավունքի շարունակական զարգացումը Կոնվենցիային անդամակցող երկրներում իրավական ավանդույթի խորը արմատավորված եւ անհրաժեշտ մասն է (*տե՛ս Կոուլինն ընդդեմ Ֆրանսիայի [Kruslin v. France]*, 1990 թվականի ապրիլի 24, § 29, շարք Ա թիվ 176-Ա): Չի կարելի համարել, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով արգելվում է ըստ առանձին գործերի դատական մեկնաբանման միջոցով քրեական պատասխանատվության կանոնների աստիճանական հստակեցումը՝ պայմանով, որ հետետող զարգացումը համապատասխանում է արարքի էությանը եւ կարող է ողջամտորեն կանխատեսելի լինել (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 36 վերելում հիշատակված՝ *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*, § 34, *Ստրելեցը, Կեսսլերը եւ Կրենզն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Streletz, Kessler and Krenz v. Germany [GC]]*, թիվ 34044/96 եւ 2 այլ, § 50, ՄԻԵԴ 2001 II.4-Հ.Վ.-ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [*K.-H.W. v. Germany [GC]*], թիվ 37201/97, § 85, 2001 թվականի մարտի 22. *Կորբելին ընդդեմ Հունգարիայի [ՄՊ] [Korbely v. Hungary [GC]]*, թիվ 9174/02, § 71, ՄԻԵԴ 2008. եւ *Կոնոնովն ընդդեմ Լատվիայի [ՄՊ] [Kononov v. Latvia [GC]]*, թիվ 36376/04, § 185, ՄԻԵԴ 2010): Հասանելի եւ ողջամտորեն կանխատեսելի դատական մեկնաբանման բացակայությունը կարող է նույնիսկ հանգեցնել մեղադրյալի՝ 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքների խախտման հայտնաբերման (հանցագործության բաղկացուցիչ տարրերի վերաբերյալ տե՛ս *Պեսսինոն ընդդեմ Ֆրանսիայի [Pessino v. France]*, թիվ 40403/02, §§ 35-36, 2006 թվականի հոկտեմբերի 10, եւ Դրագոտոնիոն եւ Միլիտարու-Պիդհորնին ընդդեմ Ռումինիայի [*Dragotoniu and Militaru-Pidhorni v. Romania*], թիվ 77193/01 եւ 77196/01, §§ 43-44, 2007 թվականի մայիսի 24. պատժի մասով տե՛ս *Ալիմուսաջն ընդդեմ Ալբանիայի [Alimucaj v. Albania]*, թիվ 20134/05, §§ 154-62, 2012 թվականի փետրվարի 7): Եթե այդպես չլինի, սույն դրույթի առարկան եւ նպատակը, այն է՝ ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական հետապնդման, դատապարտման եւ պատժի, կտապալվեն»:

68. Դատարանն ընդգծում է նաև, որ կանխատեսելիության հասկացության շրջանակը զգալիորեն կախված է խնդրո առարկա օրենքի բովանդակությունից, այն ոլորտից, որն այն պետք է ընդգրկի, եւ այն անձանց թվից եւ կարգավիճակից, որոնց այն ուղղված է: Օրենքը, սակայն, կարող է համարվել որպես կանխատեսելիության պահանջը բավարարող, նույնիսկ եթե տվյալ անձը ստիպված է համապատասխան իրավաբանական խորհրդատվություն ստանալ՝ գնահատելու համար (այնքանով, որքանով ողջամտորեն հնարավոր է տվյալ հանգամանքներում) այն հետեւանքները, որոնց կարող է հանգեցնել տվյալ գործողությունը: Սա հատկապես վերաբերում է մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց, որոնք սովոր են մեծ զգուշավորություն ցուցաբերել իրենց աշխատանքը կատարելիս: Այս առումով ակնկալվում է, որ վերջիններս հատուկ ուշադրությամբ պետք է գնահատեն այն ռիսկերը, որոնք ի հայտ են գալիս նմանատիպ գործողությունների արդյունքում (տե՛ս *Վասիլիաուսկասն ընդդեմ Լիտվայի [ՄԴ] [Vasiliauskas v. Lithuania [GC]]*, թիվ 35343/05, § 157, ՄԻԵԴ 2015, եւ թիվ P16-2019-001 խորհրդատվական կարծիքը, § 61):

69. Ինչպես արդեն նշվեց վերելում, դատական մեկնաբանման միջոցով քրեական պատասխանատվության վերաբերյալ նորմերի աստիճանական հստակեցմանը հետեւող զարգացումը պետք է համապատասխանի հանցագործության էությանը եւ լինի ողջամտորեն կանխատեսելի: Ողջամտորեն կանխատեսելի կարող է համարվել նախադեպային իրավունքի տրամաբանությանը հետեւող դատական մեկնաբանումը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ս.Վ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [S.W. v. the United Kingdom]*, §§ 41-43, եւ վերելում հիշատակված՝ *Ս.Ռ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության [C.R. v. the United Kingdom]*, §§ 39-41): Նշված պահանջը կարող է կատարված համարվել նույնիսկ այն դեպքում, երբ ներպետական դատարաններն առաջին անգամ են մեկնաբանում եւ կիրառում դրույթը (որպես օրինակ տե՛ս *Յորգիչն ընդդեմ Գերմանիայի [Jorgic v. Germany]*, թիվ 74613/01, §§ 106-109, ՄԻԵԴ 2007-III, եւ *Կուդրեվիչիուսը եւ այլք ընդդեմ Լիտվայի [ՄԴ] [Kudrevičius and*



*Others v. Lithuania* [GC]], թիվ 37553/05, § 115, ՄԻԵԴ 2015, եւ *Հուիտամակին ընդդեմ Ֆինլանդիայի* [*Huhtamäki v. Finland*], թիվ 54468/09, §§ 46-54, 2012 թվականի մարտի 6):

70. Դատարանը նաեւ վերահաստատում է, որ փաստերի գնահատման եւ նրանց իրավական որակման մասով ներպետական դատարաններին փոխարինելն իր խնդիրը չէ՝ պայմանով, որ դրանք հիմնված են ապացույցների ողջամիտ գնահատման վրա: Ընդհանուր առմամբ, Դատարանն ընդգծում է, որ ներպետական օրենսդրության մեկնաբանման խնդիրը լուծելն առաջին հերթին ազգային իշխանությունների եւ մասնավորապես դատարանների խնդիրն է: Հետեւաբար իր դերը սահմանափակվում է՝ պարզելով, թե արդյոք այդ մեկնաբանումը համատեղելի է Կոնվենցիայի հետ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ռոկլենայի* գործը, § 51, հաջորդող հղումների հետ միասին):

71. Այնուամենայնիվ, Դատարանի ուսումնասիրման լիազորությունները պետք է լինեն ավելի լայն, երբ Կոնվենցիայով, այս դեպքում՝ 7-րդ հոդվածով նախատեսված իրավունքով պահանջվում է, որ դատապարտման եւ պատժի համար լինի իրավական հիմք (նույն տեղում՝ § 52):

72. Դատարանը նաեւ վերահաստատում է, որ մի քանի առիթներով այն վճռել է, որ վաղեմությունը կարող է սահմանվել որպես հանցանքը կատարած անձի՝ հանցանքի կատարման օրվանից որոշակի ժամկետը լրանալուց հետո քրեական հետապնդման չենթարկվելու կամ չդատապարտվելու՝ օրենքով սահմանված իրավունք: Վաղեմության ժամկետները, որոնք Պայմանավորվող պետությունների ներպետական իրավական համակարգերին բնորոշ հատկանիշ են, ծառայում են մի քանի նպատակների, այդ թվում՝ իրավական որոշակիության եւ վերջնականության ապահովմանը, մեղադրյալի իրավունքների խախտումների կանխարգելմանը, ինչը կարող է խաթարվել, եթե դատարաններից պահանջվի որոշումներ կայացնել այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք ժամանակի ընթացքում կարող են դառնալ ոչ ամբողջական (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քոեմին եւ այլք* գործը, § 146):

73. Վերոնշյալ գործում Դատարանը կոչված է եղել որոշել, թե արդյոք դեռևս չլրացած վաղեմության ժամկետները երկարաձգելու մասով օրենսդրական փոփոխություններն առաջացրել են խնդիրներ 7-րդ հոդվածի մասով: Դատարանն ընդունում է, որ վաղեմության ժամկետի երկարաձգումն իրապես երկարաձգել է այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ հանցանքների մասով կարող են հարուցվել քրեական հետապնդումներ, եւ հետեւաբար բացասաբար է ազդել դիմումատուների վիճակի վրա՝ մասնավորապես խաթարելով նրանց ակնկալիքները: Այդուհանդերձ, սա չի հանգեցնում 7-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների խախտման, քանի որ այդ դրույթը չի կարող մեկնաբանվել որպես դատավարական իրավունքի անմիջապես կիրառման միջոցով վաղեմության ժամկետների երկարաձգումն արգելող դրույթ, որի դեպքում համապատասխան հանցանքների նկատմամբ երբեք չի կիրառվում վաղեմության ժամկետի սկզբունքը (նույն տեղում՝ § 149): Այդ եզրակացությանը հանգելիս Դատարանը կարելի է այն փաստը, որ ներպետական դատարանը հետեւել է համընդհանուր ընդունված այն սկզբունքին, որ դատավարական նորմերն անմիջապես կիրառվում են ընթացքի մեջ գտնվող վարույթների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հստակորեն նախատեսված է հակառակը (*tempus regit actum* սկզբունք) (նույն տեղում, § 148):

74. Դատարանն այնուհետեւ հիմնվել է այս եզրահանգումների վրա եւ եզրակացրել, որ վաղեմության ժամկետների վերաբերյալ նորմերը չեն սահմանել հանցանքները եւ դրանց համար նախատեսված պատիժները եւ կարող են ընկալվել որպես գործի գնահատման համար սահմանված պարզ նախապայման՝ 7-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքը ճանաչելով որպես ակնհայտ անհմին (տե՛ս *Պրեւիտին ընդդեմ Իտալիայի (որոշում) [Previti v. Italy (dec.)]*, թիվ 1845/08, § 80, 2013 թվականի փետրվարի 12, որի դեպքում դիմումատուն բողոքել է, որ չի կարողացել օգտվել ավելի բարենպաստ վաղեմության ժամկետներից, որոնք ներդրվել են, երբ իր քրեական գործը եղել է ընթացքի մեջ Գերագույն դատարանում): Այս եզրահանգումը հետագայում հաստատվել է մի

շարք նմանատիպ գործերում, այդ թվում՝ *Բիագիոլին ընդդեմ Սան Մարինոյի (որոշում) [Biagioli v. San Marino (dec.)]* (թիվ 8162/13, § 90, 2014 թվականի հուլիսի 8, որի դեպքում ընդունվել է օրենք, որը, ի տարբերություն դիմումատուի կողմից հանցանքը կատարելու ժամանակահատվածի, պահանջել է որոշակի հանգամանքներում կասեցնել վաղեմության ժամկետը, եւ որը տարածվել է դիմումատուի գործի նկատմամբ) եւ *Բորչեան ընդդեմ Ռումինիայի (որոշում) [Borcea v. Romania (dec.)]* (թիվ 55959/14, § 64, 2015 թվականի սեպտեմբերի 22, որի դեպքում դիմումատուն՝ քրեական վարույթով մեղադրյալը, չի կարողացել օգտվել իրեն վերագրվող հանցանքի մասով ավելի նպաստավոր վաղեմության ժամկետներ սահմանող օրենսդրական փոփոխություններից):

75. Այսպիսով, ինչպես երեւում է վերելում ամփոփ ներկայացված որոշումներից, դեռեւս չլրացած վաղեմության ժամկետը երկարաձգող օրենսդրական փոփոխությունները չեն համարվել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում:

76. Այդուհանդերձ, ի տարբերություն այդ գործերի, Դատարանը գտել է, որ վերջին գործում, որի դեպքում դիմումատուները դատապարտվել են վաղեմության ժամկետը լրացած հանցանքի համար, տեղի է ունեցել 7-րդ հոդվածի խախտում (տե՛ս *Անտիան եւ Խուպենիան ընդդեմ Վրաստանի [Antia and Khupenia v. Georgia]*, թիվ 7523/10, §§ 38-43, 2020 թվականի հունիսի 18): Այդպիսով, թեւ վերահաստատելով վերելում՝ 72-րդ պարբերության մեջ նշված՝ վաղեմության ժամկետների սահմանումը եւ դրանց նպատակը, Դատարանը նշել է, որ այս համատեքստում 7-րդ հոդվածի համաձայն ուսումնասիրության իր լիազորությունների շրջանակում իր առջեւ բարձրացված հիմնական հարցն այն է, թե արդյոք դիմումատուների դատապարտման համար եղել են օրինական իրավական հիմքեր՝ համապատասխան հանցանքի մասով վաղեմության ժամկետը լրանալու տեսանկյունից:

77. Այլ կերպ ասած, ինչպես կարելի է տրամաբանորեն եզրակացնել Դատարանի վերոնշյալ եզրահանգումներից, այն դեպքում, երբ քրեական

պատասխանատվությունը վերականգնվել է վաղեմության ժամկետն անցնելուց հետո, այն կհամարվի անհամատեղելի 7-րդ հոդվածով ամրագրված՝ օրինականության (Nullum crimen, nulla poena sine lege (չկա հանցագործություն եւ պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով)) եւ կանխատեսելիության հիմնական սկզբունքների հետ (տե՛ս վերելում՝ 67-71-րդ պարբերությունները): Դրանից հետեւում է, որ այն դեպքում, երբ ներպետական իրավունքով սահմանված հանցանքի համար կարող է կիրառվել վաղեմության ժամկետների մասին դրույթը, եւ վաղեմության ժամկետը լրանալու հիմքով կարող է բացառվել քրեական պատասխանատվությունը, 7-րդ հոդվածի համաձայն՝ օրինական իրավական հիմքերի բացակայության պատճառով քրեական հետապնդումն այդ հանցանքի մասով բացառվում է: Այլ վճիռ կայացնելը հավասարազոր կլինի «քրեական իրավունքն ի վնաս մեղադրյալի հետադարձ ուժով կիրառելը» ընդունելուն (շեշտադրումն ավելացված է) (տե՛ս վերելում՝ 67-րդ պարբերությունում հիշատակված՝ Դել Ռիո Պրադայի գործը, § 78 ):

78. Այս համատեքստում Դատարանին չի ներկայացվում նախքան քննվող գործով վաղեմության ժամկետն անցնելը վաղեմության ժամկետի՝ օրենսդրությամբ սահմանված երկարաձգման հարցը, այլ ներկայացվում է իրավիճակ, երբ հայցող դատարանը պետք է որոշի, թե արդյոք ՔՕ-ի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն կիրառի տասը տարի վաղեմության ժամկետը, թե ՔՕ-ի 75-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդեն գոյություն ունեցող դրույթը, որը նախատեսում է այդ դրույթում սահմանված հանգամանքներում վաղեմության ժամկետ չկիրառելու բացառությունները: Հաշվի առնելով վերելում՝ 70-րդ եւ 71-րդ պարբերություններում շարադրված ընդհանուր նկատառումները՝ առաջին հերթին եւ առավելապես հենց ազգային դատարանը պետք է իր ներպետական սահմանադրական եւ քրեական իրավունքով նախատեսված նորմերի համատեքստում որոշի, թե արդյոք ազգային իրավական համակարգում իրավաբանական ուժ ունեցող միջազգային իրավունքի կանոնները, տվյալ

դեպքում՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը), կարող են նախատեսել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավականաչափ հստակ եւ կանխատեսելի իրավական հիմքեր՝ եզրակացնելու, որ տվյալ հանցանքի նկատմամբ վաղեմության ժամկետների մասին դրույթը չի կիրառվում:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝**

*Ներկայացնում է հետեւյալ խորհրդատվական կարծիքը.*

Այն դեպքում, երբ ներպետական իրավունքի համաձայն հանցանքի նկատմամբ կիրառվում է վաղեմության ժամկետի մասին դրույթը, եւ արդեն լրացել է կիրառելի վաղեմության ժամկետը, Կոնվենցիայի 7-րդ հոդվածով բացառվում է այդ հանցանքի մասով քրեական հետապնդման վերսկսումը: Առաջին հերթին եւ առավելապես հենց ազգային դատարանը պետք է որոշի, թե արդյոք ազգային իրավական համակարգում իրավաբանական ուժ ունեցող միջազգային իրավունքի կանոնները կարող են նախատեսել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով բավականաչափ հստակ եւ կանխատեսելի իրավական հիմքեր՝ եզրակացնելու, որ տվյալ հանցանքի նկատմամբ վաղեմության ժամկետների մասին դրույթը չի կիրառվում:

Կատարված է անգլերենով եւ ֆրանսերենով եւ գրավոր տրամադրվել է 2022 թվականի ապրիլի 26-ին:

Սյորեն Պրեբենսեն՝

Քարտուղարի տեղակալ

Ռոբերտ Սպանո՝

Նախագահ

Կոնվենցիայի թիվ 16 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 94-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ սույն խորհրդատվական կարծիքին կից ներկայացվում է դատավոր Հարությունյանի առանձին կարծիքը:

Ռ.Ս.Օ.

Ս.Ս.Պ.

ԴԱՏԱՎՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Բովանդակություն

I. Գործի նախապատմությունը .....	<b>40</b>
II. Դատարանի վճռից հետո արձանագրված հիմնական զարգացումները.....	<b>44</b>
Ա. Դատական վարույթները	44
Բ. Քաղաքական զարգացումները	45
III. Գործը Մեծ պալատ ներկայացնելու փաստարկները .....	<b>46</b>
Ա. Հակասող նախադեպային իրավունքը	46
Բ. 3-րդ հոդվածի եւ 7-րդ հոդվածի բնույթը եւ շրջանակը	47
Գ. Դատարանի վճիռների կատարումը	48
Դ. Խոշտանգման արգելքը որպես <i>jus cogens</i> նորմ	48
IV. Բարձրացված հարցերի Նյութաիրավական հայեցակետերի վերլուծությունը .	<b>50</b>
Ա. Խոշտանգման արգելքը որպես <i>jus cogens</i> նորմ միջազգային իրավունքում	<b>50</b>
Բ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի բնույթը	63
Գ. Համատեքստի վերլուծությունը ներկայիս զարգացումների լույսի ներքո	66
Դ. Մեծ պալատի հաղորդագրությունները	67
Ե. Եզրակացություն	70

Ընդհանուր առմամբ ես համաձայն եմ Հայաստանի վճռաբեկ դատարանի ներկայացրած դիմումի հիման վրա Մեծ պալատի կողմից տրամադրված խորհրդատվական կարծիքի հետ: Այդուհանդերձ, ես կարծում եմ, որ Մեծ պալատը մանրամասն չի դիտարկել որոշ կարելու հարցեր՝ գտնելով, որ կարիք չկա գնալ այդքան հեռու՝ *amicus curiae* (օժանդակ դիրքորոշում) ներկայացնելու խնդրանքի նպատակներով: Կոնվենցիան չի կարող մեկնաբանվել մեկուսի: Այդ տեսակետից Դատարանի համար նախընտրելի կլիներ հստակեցնել կարծիքի 78-րդ պարբերության մեջ արտահայտված տեսակետը՝ առանց միջամտելու պետության՝ իր սեփական Սահմանադրությունը մեկնաբանելու իրավասությանը: Այդ պատճառով, հաշվի առնելով ազգային իրավական համակարգի առանձնահատկությունները՝ համապատասխան իրավական հարցերի վրա լույս սփռելու նպատակով ես պատրաստել եմ այս համընկնող կարծիքը:

Փաստական հանգամանքների հերթականությունը պահպանելու եւ վերլուծությունն իր ամբողջական իրավական համատեքստով փոխանցելու համար ես նախընտրել եմ սկսել՝ գործի ընդհանուր նախապատմությունը ներկայացնելով:

## I. ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդատվական կարծիք տրամադրելու վերաբերյալ դիմումը Հայաստանի վճռաբեկ դատարանի կողմից ներկայացվել է Դատարանի՝ *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով (թիվ 40094/05, 2012 թվականի հոկտեմբերի 2) վճիռը կայացվելուց հետո Գրիշա Վիրաբյանի քրեական գործը վերսկսվելու առնչությամբ: Վճռաբեկ դատարանի կողմից առաջադրված հարցը եղել է հետեւյալը.

«Արդյո՞ք խոշտանգման կամ դրան հավասարեցված այլ հանցագործության համար քրեական պատասխանատվության նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելը, միջազգային իրավունքի աղբյուրներին հղում կատարելով, կհամապատասխանի



Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին, եթե ներպետական իրավունքում չկա քրեական պատասխանատվության նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու պահանջ»:

Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործը Դատարանի քննությանն է ներկայացվել 2005 թվականի նոյեմբերի 10-ին: Դիմումատուն պնդել է, որ ինքը ոստիկանությունում արգելանքի տակ գտնվելու ընթացքում ենթարկվել է խոշտանգումների, եւ խոշտանգումների վերաբերյալ իր պնդումների առնչությամբ արդյունավետ որեւէ քննություն չի իրականացվել, որ իր դեմ հարուցված քրեական վարույթի կասեցման հիմքերով խախտվել է անմեղության կանխավարկածը, եւ որ իր նկատմամբ վատ վերաբերմունքի դրդապատճառները եղել են իր քաղաքական հայացքները:

Դիմումատուն տվյալ ժամանակահատվածում եղել է Հայաստանում ընդդիմադիր հիմնական կուսակցություններից մեկի՝ Հայաստանի Ժողովրդական Կուսակցության (ՀԺԿ) անդամ: 2003 թվականի սկզբին տեղի են ունեցել նախագահական ընտրություններ, որոնք միջազգային առաքելության եզրակացության համաձայն չեն համապատասխանել միջազգային չափանիշներին: Դրան հետեւել են զանգվածային բողոքի ակցիաները, եւ ՀԺԿ-ի թեկնածուն բողոքարկել է արդյունքները: Դիմումատուն ենթադրաբար ներգրավված է եղել 2003 եւ 2004 թվականներին տեղի ունեցած մի շարք բողոքի ակցիաներում եւ հանրահավաքներում:

2004 թվականի ապրիլի 23-ին դիմումատուն ձերբակալվել է ոստիկանության կողմից 2004 թվականի ապրիլի 12-ին հանրահավաքի ժամանակ ենթադրաբար հրազեն կրելու համար: Դիմումատուն պնդել է, որ այդ օրն ավելի ուշ, երբ նա գտնվել է ոստիկանությունում արգելանքի տակ, ոստիկանության մեկ ծառայող իրեն տվել է մի շարք հարցեր իր քաղաքական հայացքների եւ կառավարությունը փոխելու եւ երկրի կայունությունը խաթարելու իր մտադրությունների վերաբերյալ: Նա պնդել է, որ ավելի ուշ ոստիկանությունում նա ենթարկվել է դաժան ծեծի մի շարք ոստիկանների կողմից: Որպես ինքնապաշտպանություն նա պատասխան հարված է հասցրել՝ բջջային հեռախոսի լիցքավորիչով հարվածելով

նստիկանության ծառայողին: Իր նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը դրսևորվել է ոտքերով, մետաղական առարկաներով աճուկին հասցված հարվածներով: Նրան ենթարկել են ծեծի այնքան ժամանակ, մինչև նա կորցրել է գիտակցությունը: Այդ գործողություններում ներգրավված ոստիկանության ծառայողները պնդել են, որ դիմումատուն եղել է ագրեսիվ եւ ուղղել է հայիոյանքներ, հարձակվել է իրենցից մեկի վրա, ինչի արդյունքում մյուսները միացել են՝ պաշտպանության նպատակով: Դիմումատուին առաջադրվել է մեղադրանք պետական պաշտոնյայի նկատմամբ ուժ կիրառելու համար:

Այդ օրն ավելի ուշ իրականացվել է քննություն (մի քննիչի կողմից, որը դիմումատուի պնդմամբ եղել է կողմնակա), որի ընթացքում տարբեր ծառայողներ ժխտել են, որ հարվածել են դիմումատուին, եւ նշել են, որ նրանք տեղյակ չեն եղել վերջինիս քաղաքական պատկանելիության մասին, թեեւ իմացել են, որ նա եղել է ՀԺԿ թեկնածուի ընկերը:

Քննության ժամանակ դիմումատուին տարել են հիվանդանոց: Չնայած բժշկի խորհուրդներին՝ նրան չեն թույլատրել գիշերել հիվանդանոցում, այլ բերել են հետ եւ ստիպել գիշերն անցկացնել ոստիկանության խցում:

2004 թվականի ապրիլի 24-ին դիմումատուն հետ է բերվել հիվանդանոց, որտեղ բժիշկները արձանագրել են ամորձապարկի վնասվածք, այդ թվում՝ հեմոտոմա եւ պատռվածք: Պահանջվել է վիրահատություն, եւ դիմումատուի ձախ ամորձին հեռացվել է: Այդ օրն ավելի ուշ քննիչը, ընդունելով, որ դիմումատուն վնասվել է ոստիկանությունում ավելի վաղ տեղի ունեցած դեպքերի ժամանակ, ազատել է նրան կալանքից:

2004 թվականի ապրիլի 30-ին դիմումատուն Վարչապետին, Գլխավոր դատախազին եւ Ազգային եւ տարածքային ոստիկանության պետերին ներկայացրել է պնդումներ խոշտանգման եւ ծեծի վերաբերյալ: Նույն օրը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը, որը հետեւել է գործի ընթացքին, Գլխավոր դատախազին եւ Ազգային ոստիկանության պետին

տեղեկացրել է այն մասին, որ առկա են եղել դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ապացույցներ: 2004 թվականի մայիսին դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդումը հանձնարարվել է Երեւանի վարչական շրջանի դատախազությանը: Այնուհետեւ 2004 թվականի հունիսին դիմումատուն բողոք է ներկայացրել Վարչական շրջանի դատախազություն: Չնայած այդ բողոքին, որին կից ներկայացվել են նաեւ դիմումատուի վնասվածքների վերաբերյալ բժիշկ-փորձագետների կողմից արձանագրված ապացույցները, ոստիկանության ծառայողների կողմից ենթադրյալ արարքներին գնահատական չի տրվել, եւ 2004 թվականի հունիսի 7-ին դիմումատուի բողոքը մերժվել է:

2004 թվականի սեպտեմբերին Վարչական շրջանի դատախազությունը կայացրել է դիմումատուի դեմ քրեական վարույթն ավարտելու մասին որոշում: Այս որոշումը վերաբերել է միայն դեպքերի այն տարբերակին, որը ներկայացվել է ոստիկանության կողմից, եւ եզրակացրել է, որ դիմումատուին ծեծելիս ոստիկանության ծառայողները գործել են ինքնապաշտպանության նկատառումներով, եւ հետեւաբար նրանք չեն մեղադրվել խոշտանգման մեջ: Ընդ որում, բացի այն, որ դատախազը դիմումատուին չի ճանաչել անմեղ, նրան առաջադրված մեղադրանքներում նա հիմնավոր է համարել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումն այն հիմքով, որ անբուժելի վնասվածքները, որ նրան հասցվել են ոստիկանության կողմից, եղել են իր ենթադրյալ հանցագործության համար համապատասխան պատիժ: Դիմումատուն բողոքարկել է դատական համակարգի միջոցով՝ պնդելով, որ ոստիկանության ծառայողները խուսափել են քրեական պատասխանատվությունից, եւ որ կատարվել է անարդյունավետ քննություն: Նրա բողոքարկումներն ի վերջո չեն ունեցել հաջողություն, եւ դիմումատուն գործը ներկայացրել է Դատարան:

2012 թվականի հոկտեմբերի 2-ին Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական եւ ընթացակարգային հայեցակետերի խախտումներ, ինչպես նաեւ 6-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 14-րդ հոդվածի խախտում՝ 3-րդ հոդվածի հետ համակցությամբ:

## II. ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌԻՑ ՀԵՏՈ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

### Ա. Դատական վարույթները

Վիրաբյանի գործով Դատարանի վճռից հետո՝ 2014 թվականի օգոստոսի 21-ին, քրեական գործը վերսկսվել է: 2016 թվականի մայիսի 10-ին քննիչն սկսել է քրեական գործով նոր քննություն՝ Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, որով սահմանվում է պատիժ պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելու համար, որոնք դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ զուգորդվել են բռնությամբ: 2017 թվականի մարտի 10-ին քննիչը հանել է ոստիկանության ծառայողներին առաջադրված մեղադրանքները եւ կարճել է քրեական գործը՝ այն հիմքով, որ համաձայն Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի եւ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ համապատասխան տասը տարի վաղեմության ժամկետը լրացել էր: 2017 թվականի դեկտեմբերի 15-ին դատախազը բեկանել է այդ որոշումը՝ գտնելով, որ քննիչը չի ուսումնասիրել, թե արդյոք վարույթը կարճելը համատեղելի էր միջազգային իրավունքի հետ (դատախազը մասնավորապես հղում է կատարել *Մոկանուն եւ այլք ընդդեմ Ռումինիայի [ՄՊ] [Mocanu and Others v. Romania [GC]]* գործին, թիվ 10865/09 եւ եւս 2-ը, § 326, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ)):

2019 թվականի փետրվարի 22-ին Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը կայացրել է իր վճիռը՝ գտնելով, որ ոստիկանության երկու ծառայողները՝ պրն Հ.Մ.-ն եւ պրն Ա.Ա.-ն, կատարել են հանցագործություն Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով: Այդուհանդերձ, Առաջին ատյանի դատարանն ընդգծել է, որ հաշվի առնելով Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը եւ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը՝ քրեական պատասխանատվություն չի կարող սահմանվել, քանի որ լրացել են վաղեմության ժամկետները, իսկ

դատախազությունը չի հիմնավորել, թե ինչպես պետք է *Մոկանուն եւ այլք* գործով Դատարանի վճիռը գերակայի Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի եւ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի նկատմամբ: 2019 թվականի հուլիսի 4-ին Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել Առաջին ատյանի դատարանի վճիռը: 2019 թվականի օգոստոսի 30-ին դատախազը Հայաստանի վճռաբեկ դատարան է ներկայացրել վճռաբեկ բողոք:

### **Բ. Քաղաքական զարգացումները**

Գրիշա Վիրաբյանն այժմ ապրում է Բելգիայում որպես քաղաքական հայացքների համար հետապնդվող փախստական: Մի քանի հարցաքննությունների ժամանակ, ինչպես նաեւ քրեական գործով քննության ընթացքում պրն Վիրաբյանը պնդել է, որ նրա նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերած ոստիկանության ծառայողներից մեկը եղել է պրն Ա.Կ.-ն, որը 2013 թվականին (2012 թվականին Դատարանի կողմից վճիռը կայացվելուց հետո) ստացել է պաշտոնի բարձրացում եւ նշանակվել է Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պետ: Մինչեւ այդ Ա.Կ.-ն աշխատել է ոստիկանության համակարգում 1990 թվականից ի վեր եւ 2008 թվականի մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ զբաղեցրել է Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Խորհրդային բաժնի պետի պաշտոնը: Հետընտրական արյունալի իրադարձություններից հետո նա պարզեւատրվել է «հասարակական կարգի գերազանց պահպանման համար» մեղալով: Զանգվածային լրատվամիջոցների զեկույցների համաձայն՝ Ա.Կ.-ն մահացել է 2015 թվականին Ռուսաստանի Պյատիգորսկ քաղաքում մասնավոր գարեջրատանը տեղի ունեցած գազի պայթյունից:

### III. ԳՈՐԾԸ ՄԵԾ ՊԱԼԱՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

#### Ա. Հակասող նախադեպային իրավունքը

Ինչպես երևում է, Դատարանի նախադեպային իրավունքով հստակ դիրքորոշում չի սահմանվում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք խոշտանգում, նվաստացում կամ ոչ մարդկային վերաբերմունք ցուցաբերելու հանցագործության համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետները Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կամ 7-րդ հոդվածի շրջանակում են, կամ այն հարցի վերաբերյալ, թե արդյոք 3-րդ հոդվածը պետք է հասկանալ որպես բացարձակ արգելք, որի վրա չեն տարածվում վաղեմության ժամկետներ:

Չորս գործերի առնչությամբ Դատարանը բավական հստակ վճռել է, որ 3-րդ հոդվածի համաձայն քննված հատուկ իրավիճակի, մասնավորապես՝ պաշտոնատար անձի կողմից ցուցաբերված վատ վերաբերմունքի հանդեպ պետք է ցուցաբերել այլ մոտեցում: Այդ գործերով Դատարանը չի ցանկացել ընդունել վաղեմության ժամկետները (տե՛ս վերելում հիշատակված՝ *Մոկանուն եւ այլք* գործը, § 326, *Աբդուլսամետ Յամանն ընդդեմ Թուրքիայի* [*Abdülsamet Yaman v. Turkey*], թիվ 32446/96, § 55, 2004 թվականի նոյեմբերի 2, *Օկկալին ընդդեմ Թուրքիայի* [*Okkali v. Turkey*], թիվ 52067/99, § 76, ՄԻԵԴ 2006-XII (քաղվածքներ) եւ *Եթերն ընդդեմ Թուրքիայի* [*Yeter v. Turkey*], թիվ 33750/03, § 70, 2009 թվականի հունվարի 13):

Մասնավորապես *Մոկանուն եւ այլք* գործում (վերելում հիշատակված, § 326) Դատարանը նշել է.

«Դատարանը նաեւ վճռել է, որ պետական պաշտոնատար անձանց կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին առնչվող գործերով քրեական վարույթները չպետք է դադարեցվեն վաղեմության ժամկետի հիմքով, եւ նաեւ այդ գործերով չպետք է թույլատրվի համաներում ու ներում հայտարարելը... Ավելին, վաղեմության ժամկետը կիրառելու կարգը պետք է համատեղելի լինի Կոնվենցիայի պահանջներին: Հետեաբար դժվար է ընդունել վաղեմության ոչ ճկուն ժամկետներ՝ առանց բացառությունների նախատեսման»:

Վերջին նախադեպային իրավունքի դեպքում Դատարանը դժկամությամբ է հաստատել այս մոտեցումը եւ ընդունել է, որ առկա են այնպիսի իրավիճակներ, երբ «կարող է անհնարին լինել վերսկսել քրեական գործով քննությունները» (տե՛ս *Տաշդեմիրն ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [*Taşdemir v. Turkey* (dec.)], թիվ 52538/09, § 14, 2019 թվականի մարտի 12):

**Բ. 3-րդ հոդվածի եւ 7-րդ հոդվածի բնույթը եւ շրջանակը**

Վերոնշյալ խնդրի հետ կապված նույնականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է եղել մշակել Դատարանի ամբողջական մոտեցումը վաղեմության ժամկետների մասով եւ հստակեցնել, թե արդյոք այս հարցին պետք է անդրադառնալ 7-րդ հոդվածի շրջանակներում՝ ավելի լայն իմաստով, թե որպես առանձնահատուկ հարց՝ 3-րդ հոդվածի շրջանակներում՝ հաշվի առնելով դրա բնույթը եւ նպատակը: Այս համատեքստում Դատարանի մոտեցումը ես միասնական չի եղել: Մեծ մասամբ այն ձեռնպահ է մնացել այդ խնդրի վերաբերյալ 7-րդ հոդվածի շրջանակներում որոշումներ կայացնելուց՝ այն հիմքով, որ դրանք զուտ ընթացակարգային հարցեր են: Այդուհանդերձ, վերոնշյալ գործերում Պալատը հարցը ներկայացրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի շրջանակներում:

Մեծ պալատի համար չափազանց կարեւոր է եղել հստակեցնել այս հարցը: Մասնավորապես կարեւոր է եղել սահմանել, թե արդյոք վատ վերաբերմունքի բնույթի հանցագործության համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը բնորոշ եւ ներհատուկ է 3-րդ հոդվածին, մասնավորապես այն դեպքերում, երբ վատ վերաբերմունքը ցուցաբերվել է պետական պաշտոնատար անձի կողմից, թե արդյոք վաղեմության ժամկետը պետք է լայնորեն դիտարկել՝ 7-րդ հոդվածի համաձայն: Ինչպես երեւում է, Մեծ պալատը բոլոր այդ հարցերին տվել է հստակ պատասխաններ:

#### Գ. Դատարանի վճիռների կատարումը

Դատարանի վճիռների կատարումն ընկած է մարդու իրավունքների առնչությամբ եվրոպական հասարակական կարգի ձեւավորման առանցքում, առանց որի Կոնվենցիան կկորցնի իր արժեքը եւ կդառնա զուտ դեկլարատիվ բնույթի փաստաթուղթ: Ինչպես այս գործում, այնպիսի գործերով վճիռները, ինչպիսին է, օրինակ, *Մորեյրա Ֆերեյրան ընդդեմ Պորտուգալիայի* (թիվ 2) [*Moreira Ferreira v. Portugal (no. 2)*] ([ՄՊ], թիվ 19867/12, 2017 թվականի հուլիսի 11) գործը, տալիս են եվրոպայում իրավական պաշտպանության ներպետական միջոցների նկատմամբ իր պահանջները մշակելու մասով Դատարանի մոտեցման մասին կոնկրետ ազդակներ: Այս գործը կարելի է նաեւ այն պատճառով, որ մեծ հաշվով այն վերաբերում է Դատարանի եւ ազգային դատական իշխանությունների միջեւ սահմանադրական փոխգործակցությանը:

Պետք է նաեւ հաշվի առնել այն, որ որոշ իրավական համակարգերում վատ վերաբերմունքին առնչվող դատական վարույթները կարող են տեսել երկար ժամանակ, հետեւաբար դա նշանակում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելը երկարատեւ գործընթաց է: Ավելին, Դատարանի փորձը ցույց է տալիս, որ վճիռ կայացնելն ինքնին կարող է տեսել ավելի քան հինգ տարի: Այդ հանգամանքներում, վաղեմության ժամկետների կիրառման արդյունքում զոհերը կարող են ավտոմատ կերպով զրկված լինել ներպետական իրավունքի համաձայն իրենց գործը վերսկսելու հնարավորությունից, եւ սա կարող է համարվել զոհի նկատմամբ անմարդկային վերաբերմունք:

#### Դ. Խոշտանգման արգելքը որպես *jus cogens* նորմ

Կոնվենցիայի այլ դրույթների համեմատ 3-րդ հոդվածն ունի առանձնահատուկ բնույթ: Հարկ է հիշեցնել, որ խոշտանգման արգելքը սովորաբար իրավունքի մաս է եւ դարձել է *jus cogens* նորմ: Արգելքը



հիմնավորված է լայնորեն կիրառվող միջազգային գործելակերպում եւ պետությունների *opinio juris* (որպես օրենք ընդունելը) նորմերում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա բխում է Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո գործող գրեթե բոլոր միջազգային համաձայնագրերից կամ մարդու իրավունքներին առնչվող տարածաշրջանային այլ մեխանիզմներից: Հարկ է նաեւ նշել, որ խոշտանգում կիրառելու գործելակերպը ձեռք է բերել բացարձակ բնույթ (օրինակ, տե՛ս Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) 2012 թվականի հուլիսի 20-ի վճիռը *Քրեական հետապնդման կամ հանձնման պարտավորությանն առնչվող հարցերի առնչությամբ (Բելգիան ընդդեմ Սենեգալի)*, ԱՄԴ զեկույցներ 2012 թվական, § 99 եւ Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի (ՀՄՔՏ)՝ 1998 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը *Դադարադատության Ֆուրունջիայի գործով*, Գործ թիվ IT-95-17/1, §§ 153-157): Խոշտանգումը եւ անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքը չեն սահմանափակվում միայն անձին հասցված ֆիզիկական ցավով եւ տառապանքով: Դրանց վերջնական նպատակը զոհի ինքնության եւ ամբողջականության ոչնչացումն է: Այս նկատառումների լույսի ներքո, հանցանք կատարող անձանց հնարավոր անպատժելիությունը նվազեցնում է տուժողի հույսն արդարադատության հարցում: Հետեւաբար հաշվի առնելով վատ վերաբերմունքի հանցագործության չափազանց զգայուն բնույթը՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետների հիմքով անպատժելիությունը հանգեցնում է շարունակական խախտման:

Այս համատեքստում սա լավ հնարավորություն է եղել Դատարանի համար զարգացնելու 3-րդ հոդվածի *jus cogens* նորմի դոկտրինը եւ հաստատելու, որ միայն խոշտանգման բնույթի հանցագործության քրեական հետապնդումը կարող է ստիպել, որ ժամանակն աշխատի ի նպաստ զոհի շահերի եւ մարդու իրավունքների պաշտպանության:

#### IV. ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՅԵՐԻ ՆՅՈՒԹԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Արդյո՞ք խոշտանգման կամ դրան հավասարեցված այլ հանցագործության համար քրեական պատասխանատվության նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելը, միջազգային իրավունքի աղբյուրներին հղում կատարելով, կհամապատասխանի Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածին, եթե ներպետական իրավունքում չկա քրեական պատասխանատվության նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու պահանջ»:

Այս հարցին պատասխանելու համար պետք է վերլուծել մի քանի տարրեր.

- Խոշտանգման արգելքը որպես *jus cogens* նորմ միջազգային իրավունքում
- Կոնվենցիայի 3-րդ հոդվածի բնույթը
- Համատեքստի վերլուծությունը ներկայիս զարգացումների լույսի ներքո

#### Ա. Խոշտանգման արգելքը որպես *jus cogens* նորմ միջազգային իրավունքում

1948 թվականի *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի* 5-րդ հոդվածով նախատեսվում է, որ՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի»: Այս հոդվածը լայնորեն ընդունվում է որպես սովորության միջազգային իրավունքի դրսևորում: Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում խոշտանգումը եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստանցող վերաբերմունքը կամ պատիժն ակնհայտորեն արգելված են մի շարք միջազգային պայմանագրերով, որոնք ունեն պարտադիր իրավաբանական ուժ դրանք վավերացրած պետությունների համար<sup>1</sup>: Արգելքը հիմնավորված է լայնորեն

<sup>1</sup> Խոշտանգումը եւ վատ վերաբերմունքի մյուս ձեւերն արգելված են Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածի, «Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի, «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 37-րդ հոդվածի, «Բոլոր միգրանտ

կիրառվող միջազգային գործելակերպում եւ պետությունների *opinio juris* նորմերում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դա սահմանված է համընդհանուր կիրառության բազմաթիվ միջազգային փաստաթղթերում եւ ներդրվել է գրեթե բոլոր պետությունների ներպետական իրավունքում, եւ որ խոշտանգման բնույթի արարքները պարբերաբար դատապարտվում են ազգային եւ միջազգային հարթակներում: 2012 թվականին Արդարադատության միջազգային դատարանը հայտարարել է, որ խոշտանգման արգելքը սովորության միջազգային իրավունքի մաս է եւ դարձել է համընդհանուր պարտադիր նորմ (*jus cogens*) (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քրեական հետապնդման կամ հանձնման պարտավորությանը վերաբերող հարցերը (Բելգիան ընդդեմ Սենեգալի)*, § 99):

*1. Կողմ պետությունների՝ քննություն իրականացնելու պարտավորությունը*

Ե՛վ Միավորված ազգերի կազմակերպության՝ խոշտանգման դեմ կոնվենցիայի (ՄԱԿԽԴԿ), եւ՝ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ԲԲԻՄԴ) համաձայն՝ Կողմ պետություններն ունեն ենթադրյալ խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի առնչությամբ քննություն իրականացնելու պարտականություն:

---

աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիայի 10-րդ հոդվածի եւ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն: Բացի այդ, «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ունի «անձնական անվտանգության եւ բռնությունից կամ մարմնական վնասվածքներից պետության կողմից պաշտպանության իրավունք», իսկ Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն նշել է, որ «[գ]ենդերային հիմքով բռնությունը, որը խախտում է կամ չեղյալ է հայտարարում կանանց կողմից՝ ընդհանուր միջազգային իրավունքով կամ մարդու իրավունքների մասին կոնվենցիաներով նախատեսված մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից [այդ թվում՝ խոշտանգմանը կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքից] օգտվելու հնարավորությունը, համարվում է խտրականություն [«Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի] 1-ին հոդվածի իմաստով» (ԿԴԽՎԿ, Ընդհանուր առաջարկություն թիվ 19, 1992, § 7):

ՄԱԿԽԴԿ-ի 12-րդ հոդվածով նախատեսվում է հետեւյալը.

«Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ իր իրավասու մարմիններն անհապաղ եւ անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք՝ ենթադրելու, որ խոշտանգման բնույթի արարքը կատարվել է իր իրավազրույթյան ներքո գտնվող ցանկացած տարածքում»:

Քննություն իրականացնելու պարտավորությանը լրացնում է 13-րդ հոդվածը, որով նախատեսվում է, որ ցանկացած անձ ունի իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու իրավունք, եւ որ պետությունը պետք է ձեռնարկի միջոցներ՝ պաշտպանելու բողոք ներկայացնողներին եւ վկաներին՝ ընդդեմ ճնշումների: 12-րդ եւ 13-րդ հոդվածները կիրառվում են նաեւ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք պարունակող արարքների նկատմամբ:

*Բելգիան ընդդեմ Սենեգալի* գործով ԱՄԴ-ն հստակեցրել է քրեական հետապնդման պարտավորության բնույթը եւ նշանակությունը՝ նշելով, որ ՄԱԿԽԴԿ-ի 7-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ Կողմ պետությունը, որի տարածքում հայտնաբերվել է կասկածյալը, տվյալ գործը հետապնդման նպատակով հանձնի իր իրավասու մարմիններին, անկախ այն հանգամանքից, թե առկա է կասկածյալի հանձնման վերաբերյալ նախապես ներկայացված պահանջ, թե ոչ: ՄԱԿԽԴԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է, որ այդպիսով պետությունը պարտավոր է կատարել նախնական հետաքննություն այն պահից, երբ կասկածյալը հայտնաբերվում է իր տարածքում, ինչը նշանակում է, որ 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործը քրեական հետապնդման նպատակով իր իրավասու մարմիններին հանձնելու պարտավորությունը կասկածյալին առաջադրված մեղադրանքներին առնչվող՝ իրենց տիրապետության ներքո գտնվող ապացույցների լույսի ներքո կարող է հանգեցնել կամ չհանգեցնել վարույթ հարուցելուն (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քրեական հետապնդման կամ հանձնման պարտավորությանը վերաբերող հարցերը (Բելգիան ընդդեմ Սենեգալի)*, § 95): Ավելին, ԱՄԴ-ն նշել է, որ ՄԱԿԽԴԿ-ի 7-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ քրեական հետապնդում իրականացնելու

պետության պարտավորությունը միտված է թույլ տալու իրագործել ՄԱԿԽԴԿ-ի խնդրո առարկան եւ նպատակը, այն է՝ «խոշտանգումների դեմ պայքարը դարձնել ավելի արդյունավետ» (ՄԱԿԽԴԿ-ի նախաբան): Այն նաեւ նշել է, որ այդ է պատճառը, որ վարույթները պետք է իրականացվեն առանց ձգձգումների (տե՛ս վերելում հիշատակված՝ *Քրեական հետապնդման կամ հանձնման պարտավորությանը վերաբերող հարցերը (Բելգիան ընդդեմ Սենեգալի)*, § 115):

Թեեւ Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոմիտեն (ԽԴԿ) կոնկրետ ցուցումներ չի տվել այն առավելագույն ժամանակի վերաբերյալ, որը կարող է անցնել վատ վերաբերմունքի կասկածի հիմքերի առաջացումից մինչեւ քննությունն սկսելը կամ ավարտելը, *Բլանկո Աբադն ընդդեմ Իսպանիայի* գործով այն շեշտադրել է, որ օպերատիվությունը կարելի է, որպեսզի ապահովվի, որ զոհը չշարունակի ենթարկվել այդ արարքներին, եւ նաեւ ընդհանրապես այն պատճառով, որ եթե կիրառված մեթոդները չունեն մշտական կամ լուրջ հետեւանքներ, խոշտանգման եւ հատկապես դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ֆիզիկական հետքերը ժամանակի ընթացքում անհայտանում են (տե՛ս *Բլանկո Աբադն ընդդեմ Իսպանիայի [Blanco Abad v. Spain]*, ԽԴԿ հաղորդագրություն թիվ 59/1996, 1998 թվականի մայիսի 14, § 8.2): Այդ գործով Կոմիտեն համարել է, որ վատ վերաբերմունքի մասին սկզբնական հաղորդման եւ քննություն սկսելու միջեւ տասնութ օր ժամկետը շատ երկար է:

Պետության՝ արագ եւ անկողմնակալ քննություն ապահովելու պարտավորությունը կախված չէ պաշտոնական բողոք ներկայացնելուց: Բավական է, որ զոհը պնդի, որ կատարվել է խոշտանգում (տե՛ս *Պարոտն ընդդեմ Իսպանիայի [Parot v. Spain]*, ԽԴԿ հաղորդագրություն թիվ 6/1990, 1995 թվականի մայիսի 2, վերելում հիշատակված՝ *Բլանկո Աբադի գործը*, § 8.6 եւ *Լապիֆն ընդդեմ Թունիսի [Ltaief v. Tunisia]*, ԽԴԿ հաղորդագրություն թիվ 189/2001, 2003 թվականի նոյեմբերի 14), կամ որ գոյություն ունեն այլ ողջամիտ հիմքեր՝ ենթադրելու, որ կարող է տեղի ունենալ խոշտանգում կամ ցուցաբերվել վատ վերաբերմունք (տե՛ս վերելում հիշատակված՝ *Բլանկո Աբադի գործը*, § 8.2 եւ վերելում հիշատակված՝ *Լապիֆի գործը*, § 10.5):

ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվում է, որ պետությունն ապահովի իր տարածքի սահմաններում եւ իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց՝ ՔՔԻՄԴ-ով նախատեսված իրավունքները, իսկ 2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ այն անձանց համար, որոնց իրավունքները խախտվել են, պետք է ապահովվի իրավական պաշտպանության արդյունավետ միջոց: 7-րդ հոդվածի հետ միասին այս դրույթները նշանակում են, որ վատ վերաբերմունքի մասին բողոքները իրավասու մարմինների կողմից պետք է քննվեն արագ եւ անկողմնակալ կերպով (տե՛ս Մարդու իրավունքների հարցերով կոմիտե, ՔՔԻԿ-ի թիվ 20 ընդհանուր մեկնաբանություն, Հոդված 7 (Խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը կամ պատիժը), § 14):

Պետության կողմից իրականացված քննությունները պետք է լինել արդյունավետ: *Ֆուենցալիդան ընդդեմ Էկվադորի* գործով դիմումատուի՝ խոշտանգումների եւ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների մասով քննությունը հարուցվել է եւ այնուհետեւ մերժվել քրեական հարցերով դատարանի կողմից: Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հարցերով կոմիտեն (ՄԻԿ) գտել է, որ գործի հատուկ հանգամանքներում այդ քննությունը բավարար չի եղել, քանի որ չեն եղել ապացույցներ, որ դեպքը, որի ժամանակ դիմողին հասցվել է հրազենային վիրավորում, քննվել է դատարանի կողմից (տե՛ս *Ֆուենցալիդան ընդդեմ Էկվադորի [Fuenzalida v. Ecuador]*, ՄԻԿ, Հաղորդագրություն թիվ 480/1991, 1996 թվականի հուլիսի 12, § 9.4):

Պետության՝ քննություն իրականացնելու պարտավորությունը տարածվում է նույնիսկ նախկինում գործող ռեժիմում կատարված արարքների վրա: 7-րդ հոդվածի վերաբերյալ իր Ընդհանուր մեկնաբանության մեջ ՄԻԿ-ը նշել է.

«Համաներումները սովորաբար անհամատեղելի են նման արարքների քննությունն իրականացնելու, իրենց իրավագործության շրջանակում այդ արարքներից ազատությունը երաշխավորելու եւ հետագայում դրանց կատարումը բացառելու պետության պարտավորության հետ: Պետությունները չեն կարող զրկել անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից, այդ թվում՝ փոխհատուցման եւ հնարավորինս

ամբողջական վերականգնման հնարավորությունից օգտվելու իրենց իրավունքից: (տե՛ս Մարդու իրավունքների հարցերով կոմիտե, վերետում հիշատակված՝ ՔՔԻԿ-ի թիվ 20 ընդհանուր մեկնաբանություն, § 15):

Այսպիսով, *Ռոդրիգեսն ընդդեմ Ուրուգվայի* գործով՝ նախկին ռազմական ռեժիմի գաղտնի ոստիկանի կողմից իր նկատմամբ իրականացված խոշտանգումների վերաբերյալ դիմումատուի պնդումները չքննելը հանգեցրել է ՔՔԻՄԴ-ի 7-րդ հոդվածի խախտման՝ 2-րդ հոդվածի 3-րդ կետի համակցությամբ, անկախ համաներում հայտարարելու դրույթ նախատեսող օրենքի առկայությունից (տե՛ս *Ռոդրիգեսն ընդդեմ Ուրուգվայի* [*Rodríguez v. Uruguay*], ՄԻԿ հաղորդագրություն թիվ 322/1988, 1994 թվականի հուլիսի 19): Ավելին, չնայած փոխհատուցման այլ հնարավորությունների կենսունակությանը, *Ջելայա Բլանկոն ընդդեմ Նիկարագուայի* [*Zelaya Blanco v. Nicaragua*] գործով ՄԻԿ-ը գտել է, որ քննություն իրականացնելու պատասխանատվությունը Կողմ պետության՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց շնորհելու պարտավորության շրջանակում է (տե՛ս *Ջելայա Բլանկոն ընդդեմ Նիկարագուայի* [*Zelaya Blanco v. Nicaragua*], ՄԻԿ հաղորդագրություն թիվ 328/1988, 1994 թվականի հուլիսի 20, § 10.6):

ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով նախատեսվում է հետևյալը.

«1. Յուրաքանչյուր Կողմ պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր արարքներն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվելն որպես հանցանքներ: Նույնը վերաբերում է խոշտանգում կիրառելու փորձին, ինչպես նաև ցանկացած անձի այն արարքին, որը համարվում է հանցակցություն կամ մասնակցություն խոշտանգմանը:

2. Յուրաքանչյուր Կողմ պետություն այս հանցանքների համար սահմանում է համապատասխան պատիժներ, որոնք հաշվի են առնում դրանց ծանր բնույթը»:

ԽԴԿ-ն չի սահմանել այն նվազագույն պատիժը, որը պատշաճ կերպով կարտացոլեր խոշտանգման բնույթի հանցագործության ծանրությունը: Այնուամենայնիվ, *Ուրրա Գուրիդին ընդդեմ Իսպանիայի* գործով ԽԴԿ-ն գտել է, որ խոշտանգում կատարելու մեջ մեղավոր ճանաչված՝ ազգային գվարդիայի երեք ծառայողների նկատմամբ թեթև պատիժ սահմանելն անհամատեղելի է պատշաճ

պատիժ նշանակելու պարտականության հետ եւ հետեւաբար համարվում է 4-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում<sup>2</sup>:

Բացի այդ, ԽԴԿ-ն համարել է, որ հետագայում ազգային գվարդիայի ծառայողներին շնորհված ներումն այդ գործում ունեցել է գործնական ազդեցություն խոշտանգումն անպատիժ մնալու եւ դրա կրկնությունը խրախուսելու իմաստով: Հետեւաբար ներումները համարվել են ՄԱԿԽԴԿ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, համաձայն որի՝ պետություններից պահանջվում է ձեռնարկել խոշտանգումների կանխարգելմանն ուղղված արդյունավետ միջոցներ<sup>3</sup>: Նույն պատճառաբանությամբ ԽԴԿ-ն համարել է, որ խոշտանգման բնույթի հանցագործության համաներումը անհամատեղելի է 4-րդ հոդվածով նախատեսված՝ պետությունների պարտավորությունների հետ: ԽԴԿ-ն նշել է.

«Որպեսզի խոշտանգում կատարած անձինք չմնան անպատիժ, [Կողմ պետությունները պետք է] ապահովեն քննության իրականացումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ խոշտանգման բնույթի հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց քրեական հետապնդումը, եւ ապահովեն, որ համաներում նախատեսող օրենքները բացառեն դրանց կիրառումը խոշտանգումների նկատմամբ»<sup>4</sup>:

Խոշտանգման բնույթի բոլոր արարքների նկատմամբ քրեական իրավունքը կիրառելու պարտավորությունը չի սահմանափակվում ժամանակի մեջ, հետեւաբար խոշտանգման բնույթի հանցագործության նկատմամբ չի կիրառվում վաղեմության ժամկետների մասին դրույթը<sup>5</sup>:

<sup>2</sup> Ուրրա Գուրիդին ընդդեմ Իսպանիայի [*Urra Guridi v. Spain*], ԽԴԿ հաղորդագրություն թիվ 212/2002, 2005 թվականի մայիսի 17, § 6.7: Իսպանիայի գերագույն դատարանը նախքան Նախարարների խորհրդի կողմից ներում շնորհելը ԷՏԱ-ի կասկածվող անդամին խոշտանգելու մեջ մեղավոր ճանաչված՝ ազգային գվարդիայի ծառայողների նկատմամբ սահմանված պատիժը չորս տարի ազատազրկումից կրճատել է մինչեւ մեկ տարի:

<sup>3</sup> Նույն տեղում, § 6.6:

<sup>4</sup> ԽԴԿ, Ադրբեջանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/55/44, 1999, § 69(գ): Տե՛ս նաեւ ԽԴԿ, Սենեգալի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ A/51/44, 1996, § 117. ԽԴԿ, Չիլիի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/32/5, 2004, § 7(բ). ԽԴԿ, Բահրեյնի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/CO/34/BHR, 2005, § 6(դ). ԽԴԿ, Կոմբոջայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/31/7, 2005, § 6:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, ԽԴԿ, Թուրքիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/30/5, 2003, § 7(գ). ԽԴԿ, Չիլիի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի



Մասնավորապես ԽԴԿ նշել է, որ Թուրքիան պետք է.

«Չեղյալ հայտարարի վաղեմության ժամկետների մասին դրույթի կիրառումը խոշտանգմանն առնչվող հանցագործությունների նկատմամբ, արագացնի խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի մեջ մեղադրվող պետական պաշտոնատար անձանց մասով դատական քննությունները եւ բողոքարկումները եւ ապահովի խոշտանգման կամ վատ վերաբերմունքի մասով քննությանը կամ դատական քննությանը ներգրավված՝ անվտանգության ուժերի անդամների պարտականությունների կատարման կասեցումը քննության ընթացքում, իսկ դատապարտվելու դեպքում՝ նրանց հեռացումը պաշտոնից»<sup>6</sup>:

## 2. Այս պարտավորության բնույթը միջազգային իրավունքի շրջանակում

Ընդհանուր առմամբ մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումները կանխելու, քննելու եւ պատժելու պետության պարտավորությունները չպետք է հասկանալ պարզապես որպես այդ միջոցառումներն իրականացնելու պարտավորություն, այլ որպես արդյունքի ապահովման պարտավորություն (*obligation de resultat*), քանի որ դրանք մարդու հիմնարար իրավունքները երաշխավորող միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նորմեր են: *Jus cogens* նորմի տիրույթում, ինչպես օրինակ՝ խոշտանգման բացարձակ արգելքի դեպքում, պետության պարտավորությունները ենթադրում են եւ՝ ջանասիրաբար իրականացվող գործողությունները, եւ՝ արդյունքների ապահովումը. այլապես մենք կհայտնվենք «օրինականացված անպատժելիության» իրավիճակում:

Մարդու իրավունքների կոպիտ խախտումների (ինչպես օրինակ՝ խոշտանգման) բացարձակ արգելքը ենթադրում է այնպիսի պարտավորություններ, որոնք կարող են լինել միայն արդյունքների ապահովման պարտավորություններ, որոնք պարտադիր պետք է ունենան անհրաժեշտ

---

փաստաթուղթ CAT/C/CR/32/5, 2004, § 7(գ):

<sup>6</sup> ԽԴԿ, Թուրքիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/30/5, 2003, § 7(գ):

օբյեկտիվություն: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի շրջանակներում արդյունքը պայմանավորված չէ պետության միջոցառումներով. ճիշտ հակառակը՝ պետության միջոցառումներն են պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանությունը նախատեսող նորմերի թիրախավորված արդյունքների ապահովմամբ: Պետության միջոցառումները պետք է լինեն այնպիսին, որ նպաստեն արդյունքների ապահովման պարտավորությունների կատարմանը:

Չպետք է մոռանալ, որ խոշտանգումների բացարձակ արգելքը սահմանվել է խոշտանգումների կիրառման գործելակերպի սարսափի եւ անմարդկայնության վերաբերյալ իրազեկության բարձրացման հետեւանքով:

*3. Խոշտանգման բնույթի հանցագործության նկատմամբ վաղեմության ժամկետները չկիրառելը*

Թեեւ ՄԱԿԽԴԿ-ն հստակ չի անդրադառնում վաղեմության ժամկետներին, ԽԴԿ-ն նշել է, որ ՄԱԿԽԴԿ-ի համաձայն պետություններից պահանջվում է ապահովել, որ «ցանկացած անձի կողմից կատարված այն արարքները, որոնք համարվում են խոշտանգմանը հանցակցություն կամ մասնակցություն, ենթարկվեն քննության, քրեական հետապնդման եւ պատժի՝ առանց ժամանակային սահմանափակումների»<sup>7</sup>: ԽԴԿ-ն հիմնվել է Կոնվենցիայի 1-ին, 2-րդ, 4-րդ եւ 14-րդ հոդվածների վրա եւ հաստատել, որ խոշտանգումների քրեական հետապնդման համար չպետք է կիրառվեն վաղեմության ժամկետներ: Այն նաեւ ընդգծել է, որ խոշտանգումը չպետք է սահմանափակվի վաղեմության ժամկետներով, նույնիսկ եթե դա չի համարվում պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ հանցագործություն:

<sup>7</sup> ԽԴԿ, Դանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/DNK/CO/5, 2007, § 11:

Կոնկրետ երկրների մասով իր «Եզրակացություններ եւ առաջարկություններ» զեկույցներում ԽԴԿ-ն պետություններին հորդորել է վերացնել վաղեմության ժամկետները խոշտանգման համար<sup>8</sup>: Ձեկույցներից մեկում այն նշել է, որ «հաշվի առնելով երկար ժամանակ սահմանված խոշտանգման արգելքի *jus cogens* նորմը, խոշտանգման բնույթի արարքների քրեական հետապնդումը չպետք է սահմանափակվի օրինականության սկզբունքով կամ վաղեմության ժամկետների մասին դրույթով»<sup>9</sup>: 2007 թվականին Իտալիայի չորրորդ պարբերական զեկույցն ուսումնասիրելիս ԽԴԿ-ն ընդգծել է հետեւյալը.

«Կոմիտեն այն կարծիքին է, որ վաղեմության ժամկետների մասին դրույթը չի կարող տարածվել խոշտանգման բնույթի արարքների վրա, եւ ողջունում է Կողմ պետությունների

<sup>8</sup> ԽԴԿ, Թուրքիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/30/5, 2003, § 7(գ). ԽԴԿ, Սլովենիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/30/4, 2003, § 6. ԽԴԿ, Չիլիի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/32/5, 2004, § 7(գ). ԽԴԿ, Դանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/DNK/CO/5, 2007, § 11. ԽԴԿ, Իսպանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ESP/CO/5, 2009, § 21. ԽԴԿ, Բուլղարիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/BGR/CO/4-5, 2011, § 8. ԽԴԿ, Անդորրայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/AND/CO/1, 2013, § 7. ԽԴԿ, Լատվիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/LVA/CO/3-5, 2013, § 8. ԽԴԿ, Լիտվայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/LTU/CO/3, 2014, § 9. ԽԴԿ, Մոնտենեգրոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/MNE/CO/2, 2014, § 6. ԽԴԿ, Սերբիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/SRB/CO/2, 2015, § 8. ԽԴԿ, Մոլդովայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/MDA/CO/3, 2017, § 4. ԽԴԿ, Վենեսուելայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/29/2, 2002, § 6. ԽԴԿ, Հորդանանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/JOR/CO/2, 2010, § 9. ԽԴԿ, Ալժիրի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/DZA/CO/3, 2008, § 11. ԽԴԿ, Դրոգստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/KGZ/CO/2, 2013, § 10. ԽԴԿ, Սուրբ Աթոռի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/VAT/CO/1, 2014, § 9. ԽԴԿ, Սիերա Լեոնեի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/SLE/CO/1, 2014, §§ 9-10. ԽԴԿ, Թաիլանդի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/THA/CO/1, 2014, § 10. ԽԴԿ, Ուրուգվայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/URY/CO/3, 2014, § 16. ԽԴԿ, Գվատեմալայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/GTM/CO/5-6, 2013, § 8. ԽԴԿ, Բուրկինա Ֆասոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/BFA/CO/1, 2014, § 9. ԽԴԿ, Գվինեայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/GIN/CO/1, 2014, § 8. ԽԴԿ, Լիբանանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/LBN/CO/1, 2017, § 13:

<sup>9</sup> ԽԴԿ, Իսպանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ESP/CO/5, 2009, § 21:

պատվիրակության կողմից արված հայտարարությունն այն մասին, որ այն դիտարկում է վաղեմության ժամկետները փոփոխելու հարցը»<sup>10</sup>:

Բացի այդ, 2017 թվականին Իտալիայի վերաբերյալ հինգերորդ եւ վեցերորդ զեկույցները դիտարկելիս ԽԴԿ-ն նշել է.

«Կոմիտեն մտահոգված է, որ խոշտանգման բնույթի հանցագործության նկատմամբ կիրառվում է 18 տարի վաղեմության ժամկետների մասին դրույթը: Կոմիտեն առաջարկում է Կողմ պետություններին ապահովել, որ խոշտանգման բնույթի հանցանքի նկատմամբ չկիրառվի վաղեմության ժամկետների մասին որեւէ դրույթ, որպեսզի բացառվի անպատժելիության ցանկացած ռիսկ՝ կապված խոշտանգման բնույթի արարքների քննության ու քրեական հետապնդման եւ հանցանք կատարող անձանց պատժի հետ»<sup>11</sup>:

Ակնհայտ է, որ ԽԴԿ-ն շարունակաբար կտրուկ հայտարարություններ է արել վաղեմության ժամկետների՝ միջազգային իրավունքի հետ անհամատեղելիության վերաբերյալ, ինչպես նաեւ ներկայացրել է առաջարկություններ՝ խոշտանգումների բնույթի հանցագործության նկատմամբ վաղեմության ժամկետները վերացնելու մասին<sup>12</sup>: Հարկ է նշել, որ ԽԴԿ-ն բարձրացրել է վաղեմության ժամկետների

---

<sup>10</sup> ԽԴԿ, Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ITA/CO/4, 2007, § 19:

<sup>11</sup> ԽԴԿ, Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ITA/CO/5-6, 2017, § 13:

<sup>12</sup> ԽԴԿ, Թուրքիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/30/5, 2003, § 7(q). ԽԴԿ, Սլովենիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/30/4, 2003, § 6. ԽԴԿ, Չիլիի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/32/5, 2004, § 7(q). ԽԴԿ, Դանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/DNK/CO/5, 2007, § 11. ԽԴԿ, Իսպանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ESP/CO/5, 2009, § 21. ԽԴԿ, Բուլղարիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/BGR/CO/4-5, 2011, § 8. ԽԴԿ, Անդորրայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/AND/CO/1, 2013, § 7. ԽԴԿ, Լատվիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/LVA/CO/3-5, 2013, § 8. ԽԴԿ, Լիտվայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/LTU/CO/3, 2014, § 9. ԽԴԿ, Մոնտենեգրոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/MNE/CO/2, 2014, § 6. ԽԴԿ, Սերբիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/SRB/CO/2, 2015, § 8. ԽԴԿ, Մոլդովայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/MDA/CO/3, 2017, § 4. ԽԴԿ, Վենեսուելայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/CR/29/2, 2002, § 6. ԽԴԿ, Հորդանանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/JOR/CO/2, 2010, § 9. ԽԴԿ, Ալժիրի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/DZA/CO/3, 2008, § 11. ԽԴԿ, Ղրղզստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/KGZ/CO/2, 2013, § 10. ԽԴԿ, Սուրբ Աթոռի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի

մասին դրույթին վերաբերող հարցը եւ Հայաստանի իշխանություններին առաջարկել է ապահովել, որ խոշտանգման համար դատապարտված անձանց նկատմամբ չկիրառվեն վաղեմության ժամկետների մասին դրույթներ<sup>13</sup>: Այն նաեւ Հայաստանի իշխանություններին առաջարկել է կատարել խոշտանգումների բնույթի արարքների նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառումն արգելող օրենսդրական փոփոխություններ<sup>14</sup>: Այդուհանդերձ, Հայաստանի իշխանությունները չեն կատարել այդ փոփոխությունները: Ավելին, նման ծանր հանցագործություն կատարելուց հետո նրանք նույնիսկ բարձրացրել են հանցանքը կատարած անձանցից մեկի պաշտոնը:

1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿԽԴԿ-ն եւ պարտավորվել է կատարել այն: Համաձայն Հայաստանի սահմանադրության<sup>15</sup>՝ ՄԱԿԽԴԿ-ն ոչ միայն գերակայում է ազգայն օրենքների նկատմամբ, այլ նաեւ Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության համաձայն համարվում է իրավական համակարգի սահմանադրական տարր, ինչպես նաեւ Սահմանադրության 2005 թվականի

---

փաստաթուղթ CAT/C/VAT/CO/1, 2014, § 9. ԽԴԿ, Սիերա Լեոնեի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/SLE/CO/1, 2014, §§ 9-10. ԽԴԿ, Թաիլանդի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/THA/CO/1, 2014, § 10. ԽԴԿ, Ուրուգվայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/URY/CO/3, 2014, § 16. ԽԴԿ, Գվատեմալայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/GTM/CO/5-6, 2013, § 8. ԽԴԿ, Բուրկինա Ֆասոյի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/BFA/CO/1, 2014, § 9. ԽԴԿ, Գվինեայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/GIN/CO/1, 2014, § 8. ԽԴԿ, Լիբանանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/LBN/CO/1, 2017, § 13:

<sup>13</sup> ԽԴԿ, Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ, CAT/C/ARM/CO/3, 2012, § 10:

<sup>14</sup> 2021 թվականի մայիսի 27-ին Հայաստանն ընդունել է նոր Քրեական օրենսգիրք, որն ուժի մեջ կմտնի 2022 թվականի հուլիսի 1-ին: Նոր Քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ խոշտանգման բնույթի հանցագործության նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում:

<sup>15</sup> Հայաստանի Հանրապետության 2015 թվականի Սահմանադրության 5-րդ հոդված 3-րդ մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ օրենքների նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության 6-րդ հոդվածով, ինչպես նաեւ 2005 թվականի փոփոխված Սահմանադրության 6-րդ հոդվածով նախատեսվում է, որ եթե միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ազգային օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

փոփոխության ուժով՝ Հայաստանի իրավական համակարգի անբաժանելի մաս: Թեև ո՛չ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը, ո՛չ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը չեն նախատեսում վաղեմության ժամկետների կիրառում խոշտանգման բնույթի արարքների նկատմամբ, ազգային օրենքները չեն կարող մեկնաբանվել մեկուսի, եւ փոխարենը պետք է մեկնաբանվեն հակասության դեպքում գերակայություն ունեցող՝ միջազգային իրավունքի կանոնների համաձայն: Այսպիսով, սույն գործին առնչվող խոշտանգման բնույթի արարքը կատարելու ժամանակ, մասնավորապես՝ 2004 թվականի ապրիլին, Հայաստանն արդեն ստանձնել էր ՄԱԿԻԴԿ-ով նախատեսված պարտավորությունները եւ հանձնառել առաջնորդվել խոշտանգման բնույթի հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ ԻԴԿ-ի մեկնաբանություններով: Հետեաբար ներպետական դատարանների կողմից մեկնաբանությունները պետք է համապատասխանեն Հայաստանի միջազգային պարտավորություններին, համաձայն որոնց՝ խոշտանգման բնույթի արարքների նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում:

Խոշտանգման զոհերը, որոնց համար հասանելի չէ արդարադատությունը, շարունակում են լինել իրավունքների խախտման զոհ այնքան ժամանակ, քանի դեռ այդ խախտումը չի դադարել: Ներհատուկ իրավունքների նման ծանր խախտման մասով վաղեմության ժամկետն անցնելը չի կարող հանգեցնել հետագա անպատժելիության: Անպատժելիությունը մարդու իրավունքների լրացուցիչ խախտում է: Մարդու արժանապատվության ամբողջականության պահպանման հրամայականը բարձր է հետադարձ ուժ չունենալու կոչերից (տե՛ս վերելում հիշատակված՝ Քրեական հետապնդման կամ հանձնման պարտավորությանն առնչվող հարցերը (*Բելգիան ընդդեմ Սենեգալի*), դատավոր Կոնտադո Տրինիդատի առանձին կարծիք, § 149):

ՄԱԿԻԴԿ-ն չի պարունակում վաղեմության ժամկետների վերաբերյալ որեւէ դրույթ կամ դրանց հետադարձ ուժ չունենալու մասին որեւէ նորմ: Դրա նպատակն է երաշխավորել խոշտանգման բնույթի արարքների կրկնության բացառումը, եւ այդ նպատակով խթանում է պայքարը անպատժելիության դեմ:

Հարկ է նշել, որ 2004 թվականին *Աբդուլսամետր Յամանն ընդդեմ Թուրքիայի* գործում Դատարանը հղում է կատարել ԽԴԿ «Եզրակացություններ եւ առաջարկություններ» (2003) փաստաթղթին եւ նշել, որ եթե պետական պաշտոնատար անձին խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին առնչվող հանցագործության համար առաջադրվել է մեղադրանք, ապա «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի» ապահովման նպատակով չափազանց կարելի է, որ քրեական վարույթի եւ պատժի իրականացումը չսահմանափակվի վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, եւ որ համաներում ու ներում հայտարարելը չթույլատրվի (տե՛ս վերելում հիշատակված՝ *Աբդուլսամետր Յամանն ընդդեմ Թուրքիայի*, § 55): Դատարանի դիրքորոշումը համահունչ է միջազգային իրավունքի զարգացումներին, ինչպես նաեւ խոշտանգման բնույթի արարքների մասով վաղեմության ժամկետներ չկիրառելու վերաբերյալ միջազգային պարտավորություններին: Դատարանի դիրքորոշումը նաեւ ցույց է տալիս վերջինիս պատրաստակամությունն իր նախադեպային իրավունքում հետետելու միջազգային իրավունքի ուղուն: Բացի այդ, կարելի է ընդգծել, որ Դատարանն այդ դիրքորոշումն արտահայտել է նույնիսկ նախքան *Վիրաբյանի* գործով (վերելում հիշատակված) վճիռը կայացնելը:

## **Բ. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի բնույթը**

### *1. Բացարձակ բնույթը*

Դատարանը հետետողականորեն հղում է կատարում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգման եւ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքի «բացարձակ» բնույթին: Դատարանը հայտարարել է, որ նույնիսկ ամենադժվարին հանգամանքներում, ինչպես օրինակ՝ ահաբեկչության կամ հանցավորության դեմ պայքարի դեպքերում, խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը Կոնվենցիայով բացարձակ արգելվում է (տե՛ս *Ռամիրեզ Սանչեզն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄԴ] [*Ramirez Sanchez v. France* [GC]], թիվ 59450/00, § 115, ՄԻԵԴ 2006-IX), եւ որ 3-րդ հոդվածի

համաձայն՝ իրավունքի բացարձակ բնույթի հիմքում ընկած փիլիսոփայությունը չի նախատեսում բացառություններ կամ արդարացնող գործոններ կամ շահերի հավասարակշռվածություն (տե՛ս *Գաֆենն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Gäfgen v. Germany [GC]]*, թիվ 22978/05, § 107, ՄԻԵԴ 2010):

Ի տարբերություն Կոնվենցիայի հոդվածների մեծ մասի՝ 3-րդ հոդվածը չի համապատասխանում մարդու իրավունքների վերաբերյալ վճիռների կայացման երկփուլ մոդելին, որի դեպքում Դատարանը նախ պարզում է, թե արդյոք տեղի է ունեցել միջամտություն այդ իրավունքին, որից հետո որոշում, թե արդյոք այդ միջամտությունը կարող է հիմնավորվել որպես անհրաժեշտ՝ ժողովրդավարական հասարակությունում՝ իրավաչափ նպատակին հասնելու համար: Փոխարենը, դրա կիրառումը պահանջում է միայն ապահովել որոշակի շեմը. վատ վերաբերմունքը պետք է ունենա ծանրության նվազագույն աստիճան, եթե այն դիտարկվելու է 3-րդ հոդվածի շրջանակներում (տե՛ս *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության [Ireland v. the United Kingdom]*, 1978 թվականի հունվարի 18, § 162, Շարք Ա, թիվ 25): Եթե վերաբերմունքը դիտարկվում է 3-րդ հոդվածի շրջանակներում, այն բացարձակ արգելվում է եւ որեւէ հանգամանքներում չի կարող արդարացվել: Հետեւաբար իր սկզբունքային հռետորաբանության մեջ Դատարանը բացառում է համաչափության կամ հավասարակշռվածության բոլոր նկատառումները՝ 3-րդ հոդվածի կիրառման առնչությամբ:

2. *Առանձնահատուկ վրանգավոր տիպի խոշտանգման բնույթի հանցագործության նկատմամբ վաղեմության ժամկետների մասին դրույթը չկիրառելը*

*Աբդուլսամետ Յամանի, Օկկայի, Եթերիի եւ Մոկանուն եւ այլք* գործերով (բոլորը վերելում հիշատակված) Դատարանը գտել է, որ վաղեմության ժամկետների կիրառումը թույլատրելի չէր եւ հետեւաբար անհամատեղելի էր պետական պաշտոնատար անձանց կողմից անհատների նկատմամբ խոշտանգման բնույթի



հանցագործության ծանրության հետ: Այս դիրքորոշումն ամբողջությամբ համապատասխանում է խոշտանգումը որպես *jus cogens* նորմ արգելքի զարգացմանը եւ միջազգային իրավունքի համաձայն՝ *erga omnes* կանոնին:

Հղում կատարելով ՄԱԿԽԴԿ-ին՝ *Արդույսամետր Յամանի* գործով (վերետում հիշատակված, § 55) Դատարանը նշել է.

«Դատարանը նաեւ ընդգծում է, որ եթե պետական պաշտոնատար անձին խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին առնչվող հանցագործության համար առաջադրվել է մեղադրանք, ապա «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի» ապահովման նպատակով չափազանց կարեւոր է, որ քրեական վարույթի եւ պատժի իրականացումը չսահմանափակվի վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, եւ որ համաներում ու ներում հայտարարելը չթույլատրվի: Դատարանը նաեւ ընդգծում է քննությանը կամ դատական քննությանը ներգրավված՝ պետական պաշտոնատար անձի պարտականությունների կասեցման կամ վերջինիս դատապարտման դեպքում պաշտոնից նրա հեռացման կարեւորությունը (տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոմիտեի «Եզրակացությունները եւ առաջարկություններ». Թուրքիա, 2003 թվականի մայիսի 27, CAT/C/CR/30/5)»:

Ինչպես ընդունված է միջազգային իրավունքում, Դատարանն այստեղ վաղեմության ժամկետները ճշմարտացիորեն կապել է նման հրեշավոր հանցագործությունների զոհերի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների հասկացության հետ:

*Օկլայի* գործով (վերետում հիշատակված, § 76) Դատարանն արտահայտել է հետեւյալ դիրքորոշումը.

«Դատարանը վերահաստատում է, որ եթե պետական պաշտոնատար անձը մեղադրվում է այնպիսի հանցագործության մեջ, որի դեպքում տեղի է ունենում 3-րդ հոդվածի խախտում, ապա քրեական վարույթի եւ պատժի իրականացումը չպետք է սահմանափակվի վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, եւ համաներում ու ներում հայտարարելը չպետք է թույլատրվի»:

*Եթերիի* գործով (վերելում հիշատակված, § 70) Դատարանը նշել է.

«Ինչ վերաբերում է կարգապահական վարույթներին, ապա Դատարանը նկատում է, որ թեև ոստիկանության մեղադրվող ծառայողների պարտականությունները կասեցվել են, նրանց դեմ իրականացված կարգապահական վարույթները կարճվել են, քանի որ նրանց վրա տարածվել է «Համաներման մասին» թիվ 4455 օրենքը: Արդյունքում նրանց նկատմամբ չի կիրառվել որեւէ կարգապահական պատիժ: Այս առնչությամբ Դատարանը վերահաստատում է, որ եթե պետական պաշտոնատար անձը մեղադրվում է այնպիսի հանցագործության մեջ, որի դեպքում տեղի է ունենում 3-րդ հոդվածի խախտում, ապա քրեական վարույթի եւ պատժի իրականացումը չպետք է սահմանափակվի վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, եւ համաներում ու ներում հայտարարելը չպետք է թույլատրվի...»:

Բացի այդ, *Մոկանուն եւ այլք* գործով (վերելում հիշատակված, § 326) Դատարանը նշել է.

«Դատարանը նաեւ վճռել է, որ պետական պաշտոնատար անձի կողմից կատարված խոշտանգմանը կամ վատ վերաբերմունքին առնչվող գործերով քրեական վարույթները չպետք է դադարեցվեն վաղեմության ժամկետի հիմքով, եւ որ այդ գործերով համաներում ու ներում հայտարարելը չպետք է թույլատրվի: Ավելին, վաղեմության ժամկետը կիրառելու կարգը պետք է համատեղելի լինի Կոնվենցիայի պահանջներին: Հետեւաբար դժվար է ընդունել վաղեմության ոչ ճկուն ժամկետներ՝ առանց բացառությունների նախատեսման»:

#### **Գ. Համատեքստի վերլուծությունը ներկայիս զարգացումների լույսի ներքո**

Սույն գործը պետք է դիտարկել նաեւ երկրին բնորոշ եւ եվրոպական հասարակական կարգի համատեքստում: Նախ՝ հարկ է նշել, որ նման զգայուն եւ հույժ կարեւոր գործով վարույթը Դատարանում շարունակվել է մոտ յոթ տարի: *Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի* գործով գանգատը Դատարան է ներկայացվել 2005 թվականի նոյեմբերի 10-ին, իսկ վճիռը կայացվել է 2012 թվականի հոկտեմբերի 12-ին: Դատարանի այդ գործելակերպը նպաստում է խոշտանգման բնույթի հանցագործություն կատարած անձանց հնարավոր անպատժելիությանը: Ի լրումն դրա՝ Դատարանի կողմից իր վերջնական վճիռը կայացնելուց հետո *Վիրաբյանի* գործով վճռի լույսի ներքո քրեական գործով քննության վերսկսումն

ազգային իշխանություններից պահանջել է եւս չորս տարի: Ինչպես ներկայացվել է վերելում, այս գործելակերպն ամբողջությամբ անընդունելի է միջազգային իրավունքի համաձայն: Սա նաեւ առաջացնում է մեկ այլ մտահոգություն Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից օրենքի գերակայությունը չարաշահելու իմաստով: Հարկ է նշել, որ սույն գործով խոշտանգում կատարած անձանց պաշտոնը բարձրացվել է իրենց մատուցած ծառայության համար, եւ գործը վերսկսվել է միայն հանցանքը կատարած անձանցից մեկի մահից հետո, որն այդ ժամանակ ծառայել է որպես Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պետ: Մեկ այլ տեսանկյունից, այն հանգամանքը, որ զոհը դեռեւս շարունակում է մնալ Բելգիայում որպես քաղաքական ապաստան հայցող, վկայում է այն մասին, որ դեռեւս կա արդարադատությունը վերականգնելու անհրաժեշտություն: Պատիժները պետք է լինեն կատարված հանցագործությանը համարժեք, հակառակ դեպքում դա բացում է անպատժելիության պատուհան եւ առաջացնում է իրավական պաշտպանության անարդյունավետ միջոցներ: Կցանկանայի նաեւ նշել, որ համապատասխան ժամանակահատվածում Հայաստանի իշխանություններն իմ կարծիքով խախտել են Կոնվենցիայի 17-րդ հոդվածը՝ կապված պետության պարտավորության հետ՝ զերծ մնալու «այնպիսի գործունեությամբ զբաղվելուց կամ այնպիսի գործողություն կատարելուց, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի եւ ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով»:

#### **Դ. Մեծ պալատի հաղորդագրությունները**

Սույն խորհրդատվական կարծիքի համատեքստում եւ կարծում եմ, որ որպես Մեծ պալատի ստանձնած դիրքորոշման հիմնական կետեր պետք է համարել հետեւյալ կետերը.

1. Խորհրդատվական կարծիքի 59-րդ պարբերության մեջ Մեծ պալատը հստակ ընդգծել է, որ միջազգային իրավունքի մեջ խոշտանգման արգելքն ստացել է *jus cogens* նորմի կարգավիճակ, եւ որ հետեւաբար Դատարանը Կոնվենցիան կիրառելու է միջազգային իրավունքի համընդհանուր պարտադիր նորմին համահունչ:

2. Խորհրդատվական կարծիքի 64-րդ պարբերության մեջ Մեծ պալատն անդրադարձել է վաղեմության ժամկետների խնդրին՝ ընդգծելով, որ խոշտանգման եւ/կամ վատ վերաբերմունքի արարքների նկատմամբ չպետք է կիրառել վաղեմության ժամկետներ:

3. 65-րդ եւ 66-րդ պարբերություններում Մեծ պալատն ընդգծել է, որ եթե ազգային իրավունքով նախատեսված են նման վաղեմության ժամկետներ, ապա դրանք չեն կարող հանվել օրենքի հետադարձ ուժով:

4. Խորհրդատվական կարծիքի 65-րդ պարբերությունում Մեծ պալատն ընդգծել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված դրական պարտավորությունների խախտումը տվյալ անդամ պետության կողմից չի կարող հատուցվել ազգային օրենսդրության հետադարձ ուժով՝ փոփոխություններով՝ այդպիսով այդ բեռն անհատների վրա դնելով:

5. Կարծիքի 78-րդ պարբերության մեջ Մեծ պալատը հստակ հղում է կատարել Հայաստանի սահմանադրությանը (փոփոխված 2015 թվականին), մասնավորապես՝ 5-րդ հոդվածի 3-րդ մասին, եւ նշել է, որ Հայաստանի իշխանություններն իրենք պետք է մեկնաբանեն միջազգային իրավունքով ստանձնած իրենց պարտավորությունները՝ ապահովելու համար, որ առկա է բավականաչափ հստակ սահմանված իրավական հիմք Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով:

Այս համատեքստում պետք է հաշվի առնել, որ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում 2015 թվականին կատարված փոփոխությունների տեքստի՝

- 2004 թվականին՝ պրն Վիրաբյանի դեմ քրեական գործով վարույթը սկսելու եւ հետեւաբար խոշտանգման եւ վատ վերաբերմունքի արգելքը չկատարելու պահին, 1995 թվականին ընդունված Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանել է հետեւյալը (շեշտադրումն ավելացված է).

«Վավերացված միջազգային պայմանագրերը **Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:** Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են Հանրապետության օրենքներով, **ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:**»:

- 2014 թվականին՝ Դատարանի կողմից վճիռը կայացվելուց հետո քրեական գործը վերսկսելու եւ պետական պաշտոնատար անձի կողմից լիազորությունների չարաշահման հիմքով քրեական գործով նոր քննություն սկսելու պահին, 2005 թվականի փոփոխված Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանել է հետեւյալը (շեշտադրումն ավելացված է).

«Միջազգային պայմանագրերը **Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:** Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, **ապա կիրառվում են այդ նորմերը:**»:

Վերոնշյալ դրույթները ցույց են տալիս, որ համապատասխան պահերին Սահմանադրության կիրառելի դրույթների համաձայն միջազգային պայմանագրերը համարվել են ոչ միայն ներպետական իրավունքի նկատմամբ գերակա, այլ նաեւ ազգային օրենսդրության մաս:

## **Ե. Եզրակացություն**

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պետք է ամփոփել հետեյալը.

1. ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով պետությունից պահանջվում է ապահովել, որ խոշտանգման բնույթի բոլոր արարքներն իր քրեական իրավունքով համարվեն հանցանքներ: 1993 թվականի սեպտեմբերին Հայաստանը վավերացրել է միացել է ՄԱԿԽԴԿ-ին, մինչդեռ ԽԴԿ-ի կողմից ներկայացված նկատառումներում նշվում է, որ մինչեւ 2004 թվականն այն չի կատարել 4-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը:

Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է. «Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով սահմանված է վաղեմության ժամկետների կիրառման արգելք»:

ՄԱԿԽԴԿ-ի 4-րդ հոդվածով պահանջվում է քրեականացնել խոշտանգումը՝ Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի իմաստով: Հայաստանի կողմից այս պարտավորությունը չկատարելը չի կարող լինել 75-րդ հոդվածի 6-րդ մասը չկիրառելու պատճառ: Ի վերջո «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 26-րդ եւ 27-րդ հոդվածներով նախատեսվում է, որ ՄԱԿԽԴԿ-ի նման պայմանագրերը պետք է բարեխղճորեն կատարվեն, եւ որ «պետությունը չի կարող վկայակոչել իր ներքին իրավունքի դրույթները որպես պայմանագիրը չկատարելու արդարացում»: Միջազգային արդարադատության մշտական պալատը (ՄԱՄՊ) եւս ընդունել է դա «*Լեհաստանի քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը*» փաստաթղթում, որով այն վճռել է, որ «որեւէ պետություն չի կարող իր սեփական Սահմանադրությանը հղում կատարել ի վնաս այլ պետության՝ միջազգային իրավունքով կամ գործող պայմանագրերով ստանձնած իր պարտավորությունները կատարելուց խուսափելու նպատակով»<sup>16</sup>:

<sup>16</sup> ՄԱՄՊ, *խորհրդարարական կարծիք «Լեհաստանի քաղաքացիների եւ լեհական ծագում ունեցող*

Թեև սույն գործով դրան հակասող որևէ ներպետական դրույթ նույնիսկ գոյություն չունի, այդպիսի դրույթի բացակայությունը եւս չի կարող համարվել պետության կողմից իր պարտավորությունները չկատարելու արդարացում:

Ինչ վերաբերում է 75-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ չափանիշին, մասնավորապես, որ վաղեմության ժամկետը պետք է սահմանվի համապատասխան պայմանագրում, ապա ճիշտ է, որ ՄԱԿԽԴԿ-ն հստակ չի անդրադառնում այս հարցին: Այդուհանդերձ, ԽԴԿ-ն վերահաստատել է, որ խոշտանգման նկատմամբ չպետք է կիրառվեն ժամանակային սահմանափակումներ, ինչպես նշվել է Հայաստանի վերաբերյալ 2012 թվականի իր եզրափակիչ դիտարկումներում<sup>17</sup>:

Թեև պայմանագրային մարմինների կարծիքը չունի պարտադիր իրավաբանական ուժ, դրանց կարելիության մասին նշվել է ԱՄԴ-ի *Դիալոյի* գործում: Հղում կատարելով ՄԻԿ-ին՝ ԱՄԴ-ն վճռել է, որ «այն պետք է մեծ նշանակություն հատկացնի մասնավորապես այդ պայմանագրի կիրառումը վերահսկելու նպատակով ձեւավորված այս անկախ մարմնի կողմից ընդունված մեկնաբանությանը», եւ որ «երբ, ինչպես սույն վարույթներում, դիմում են [ԱՄԴ]-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային նշանակության փաստաթուղթ կիրառելու համար, անհրաժեշտ է պատշաճորեն հաշվի առնել տվյալ պայմանագրի ողջամիտ կիրառումը մշտադիտարկելու նպատակով հատուկ ստեղծված անկախ մարմինների կողմից ընդունված՝ այդ փաստաթղթի մեկնաբանությանը, եթե այդպիսիք ստեղծվել են»<sup>18</sup>:

---

*այլ անձանց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ» կամ Դանցիզի տարածքում ելույթ (1932 թվականի փետրվար), էջ 24:*

<sup>17</sup> ԽԴԿ, Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, CAT/C/ARM/CO/3, 2012, § 10: Տե՛ս նաեւ ԽԴԿ, Իսպանիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ESP/CO/5, 2009, § 21. ԽԴԿ, Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ITA/CO/4, 2007, § 19. Եւ ԽԴԿ, Իտալիայի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, ՄԱԿ-ի փաստաթուղթ CAT/C/ITA/CO/5-6, § 13:

<sup>18</sup> *Ահմադու Սադիո Դիալո (Գվինեայի Հանրապետությունն ընդդեմ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության)*, Ըստ էության քննություն, Վճիռ, ԱՄԴ զեկույցներ 2010, §§ 66-67:

Այնուհետև պայմանագրային մարմինների կարելուր նշանակությունը վերահաստատվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից, որն ընդգծել է հետևյալը.

«...այն իրավական նորմերը, որոնց վերաբերյալ իրենց պաշտոնական դիրքորոշումն են հայտնում պայմանագրային մարմինները, Կողմ պետությունների համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պարտավորություններ են, եւ հետեւաբար պայմանագրային մարմինների կողմից իրենց պաշտոնական դիրքորոշումը հայտնելն ավելին է, քան զուտ առաջարկությունները, որոնք կարող են հեշտությամբ անտեսվել, քանի որ Կողմ պետությունը համաձայն չի եղել ԽԴԿ-ի կողմից ընդունված մեկնաբանության կամ փաստերի նկատմամբ դրա կիրառման հետ: Ավելին, Կողմ պետությունները չեն կարող ուղղակի անտեսել դրանք, այլ պետք է բարեխղճորեն (bona fide) հաշվի առնեն դրանք: Մյուս կողմից, նրանք զրկված չեն մանրամասն ուսումնասիրելուց հետո համապատասխան գործի վերաբերյալ ճիշտ իրավական դիրքորոշումը չարտահայտելու հիմքով դրանք մերժելու իրավունքից: Այնուամենայնիվ, ՄԻԿ-ի եզրահանգումներին ընդհանրապես չարձագանքելը կարող էր համարվել ՔՔԻՄԴ-ով ստանձնած պարտավորությունների խախտում<sup>19</sup>: Իրավական հետեւանքն այն է, որ անդամ պետություններն ստանձնում են ՄԻԿ-ի վերջնական կարծիքները բարեխղճորեն հաշվի առնելու պարտավորություն»<sup>20</sup>:

2. Հայաստանի սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ օրենքների նորմերի միջեւ հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է, որ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված:

*Խոշորանգման արգելքի jus cogens* նորմը գերակայում է վաղեմության ժամկետների մասին ազգային դրույթների նկատմամբ: Հետեւաբար, որպես

<sup>19</sup> Ք. Թոմուշատ, «Մարդու իրավունքների կոմիտե», Ռ. Վոլֆրում (խմբ.), *Մաքս Պլանկ «Հանրային միջազգային իրավունքի հանրագիտարան»* (Օքսֆորդ. Օքսֆորդի համալսարանի առցանց մամուլ, 2013 թվական), § 14:

<sup>20</sup> Վենետիկի հանձնաժողով, «Մարդու իրավունքների միջազգային պայմանագրերը ներպետական իրավունքում կիրարկելու եւ դատարանների դերի մասին» զեկույց, CDL-AD(2014)036, 2014 թվականի դեկտեմբերի 8, § 78:



արգելքի *jus cogens* բնույթի բացասական ազդեցության հետեւանք, վաղեմության ժամկետ նախատեսող ցանկացած օրենք ի սկզբանե հակասում է միջազգային իրավունքի նորմերին եւ երբեք չի կարող օրինականորեն կիրառվել:

Այդպիսով, չի առաջանում Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառելիության հարց, քանի որ երբեք չի եղել վաղեմության ժամկետներ նախատեսող որեւէ գործող օրենք. վաղեմության ժամկետներ չկիրառելը, ի սկզբանե, խոշտանգումների արգելքի եւ դրանց առնչվող ժամկետների *jus cogens* նորմի համաձայն եղել է օրինական եւ կանխատեսելի՝ որպես ազգային օրենսդրության մաս:

Նույնիսկ եթե ազգային իրավունքի համաձայն քրեական հետապնդումը հնարավոր չի եղել վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, դա նշանակություն չունի, քանի որ այդ օրենքը երբեւէ իրավական ուժ չէր կարող ունենալ: